ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2 0 1 9

Հատոր 5

ԵՐԵՎԱՆ 2020

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իր գործունեության ընթացքում առաջնորդվում է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշումով, «Քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով «օրենքի կոպիտ խախտում» հասկացության գնահատման ուղենիշների վերաբերյալ ուղեցույցով և այլ իրավական ակտերով:

Հանձնաժողովի խնդիրներն են՝ նպաստել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողին ներկայացվող բարոյական բարձր չափանիշների ձևավորմանը, ծառայողական կարգապահության ամրապնդմանը, կարգապահական խախտումների կանխարգելմանը և այդպիսիք ծնող պատճառների վերացմանը, ապահովել Կոմիտեի ծառայողի անկախությունը և իրավունքների պաշտպանությունը, կանխել Կոմիտեի ծառայողին անհիմն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

Հանձնաժողովը քննարկում է կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդություններ, տալիս է եզրակացություններ, ընդունում է ընթացակարգային և ըստ էության որոշումներ:

Ժողովածուի հետ աշխատանքը հեշտացնելու նպատակով որոշումները ներկայացվում են առարկայական դասակարգմամբ, համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 27.03.2015թ. արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով «օրենքի կոպիտ խախտում» հասկացության գնահատման ուղենիշների վերաբերյալ ուղեցույցի, ինչպես նաև մեկնաբանվել են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 12.03.2015թ. թիվ 11-Ա, 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանների և «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի համաձայն թույլ տրված իրավախախտումները:

Սույն ժողովածուն հանդիսանում է նախորդ տարիներին տպագրված ժողովածուների շարունակությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մարդու իրավունքների և դատավարական երաշխիքների խախտումների վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող իրավախախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 2-րդ ենթակետ՝ *Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության սկզբունքների և դրանց հետ համակարգային կապերի մեջ գտնվող դատավարական նորմերի խախտումը կամ մարդու իրավունքներին առնչվող դատավարական այլ նորմերի խախտումը.*

1. Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Վ-ի վերաբերյալ 20.03.2019թ. թիվ ԿՀՈ 4 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....24

2. Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Խ-ի վերաբերյալ 06.06.2019թ. ԿՀՈ 9 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....46

3. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ա.Ա-ի վերաբերյալ 03.07.2019թ. ԿՀՈ 11 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***.....55

4. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Հ-ի վերաբերյալ (գործուղված՝ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին) 21.11.2019թ. ԿՀՈ 21 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....97

II. Մեկնաբանվող իրավախախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 4-րդ ենթակետ՝ *անձին* օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության դեպքում անձին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չտալը.

1. Կոմիտեի Շիրակի ՄՔՎ ավագ քննիչ Ա.Գ-ի վերաբերյալ 06.06.2019թ. ԿՀՈ 8 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....41

III. Մեկնաբանվող իրավախախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 5-րդ ենթակետ՝ *դատախազի կողմից հսկողության նպատակով պահանջվող քրեական գործը չհանձնելը, տեղեկատվություն չտրամադրելը, հանձման ենթական փաստաթղթերը չհանձնելը կամ առանց իրավաչափ նպատակի՝ քրեական գործի հանձնումը կամ տեղեկատվության տրամադրումը, կամ հանձնման ենթակա փաստաթղթերի հանձնումը ձգձգելը.*

1. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի վերաբերյալ 03.07.2019թ. ԿՀՈ 12 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***....59

IV. Մեկնաբանվող իրավախախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 7-րդ ենթակետ՝ *իրավական և փաստական հիմքերի բացակայության պայմաններում դատավարական հարկադրանքի միջոց կիրառելը կամ իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ դատավարական հարկադրանքի միջոց չկիրառելը.*

1. Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնի պետի տեղակալ Գ.Մ-ի վերաբերյալ 20.03.2019թ. ԿՀՈ 5 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....27

2. Մինչդատական վարույթի արդյունավետությունը և բնականոն ընթացքը խաթարող խախտումների վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 1-ին ենթակետ՝ *առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով անգործություն դրսևորելը, այն է՝ անհրաժեշտ դատավարական գործողություններ չկատարելը՝ անկախ դրա հետևանքից:*

1. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Վ.Մ-ի վերաբերյալ 23.01.2019թ. ԿՀՈ 1 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)*** ……11

2. Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ե.Հ-ի և նույն վարչության ավագ քննիչ Գ.Թ-ի վերաբերյալ 20.03.2019թ. ԿՀՈ 3 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***……19

3. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի նախկին ավագ քննիչ, ներկայում՝ Կոմիտեի քրեական գործերի քննության աջակցության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ի վերաբերյալ 04.04.2019թ. ԿՀՈ 6 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***……31

4. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի նախկին ավագ քննիչ, ներկայում՝ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Ղ-ի վերաբերյալ 18.09.2019թ. ԿՀՈ 16 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը)***……76

II. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 2-րդ ենթակետ՝ *քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չկատարելը կամ ժամանակին չկատարելը, որը հանգեցրել կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի.*

1. Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ե.Հ-ի և նույն վարչության քննիչ Մ.Բ-ի վերաբերյալ 23.01.2019թ. ԿՀՈ 2 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***……15

2. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհա-տրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի պետ Ա.Վ-ի և նույն բաժնի ՀԿԳ քննիչ Դ.Մ-ի վերաբերյալ 02.10.2019թ. ԿՀՈ 18 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը)***.....83

3. Կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Է.Հ-ի վերաբերյալ 21.11.2019թ. ԿՀՈ 20 որոշում ***(Հանձնաժողովը հիմ-նավորել է կարգապահական փաստի առկայությունը)***.....94

III. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 3-րդ ենթակետ՝ *մինչև նախաքննությունն ավարտելը քրեական գործում առկա նյութերը օրենքով սահմանված դատավարական կարգի պահպանմամբ չհետազոտելը կամ փաստացի հետազոտման արդյունքները չարձանագրելը.*

1. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Հ--ի վերաբերյալ 06.06.2019թ. ԿՀՈ 10 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***.....50

IV. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 5-րդ ենթակետ՝ *դատախազի կամ քննչական բաժնի պետի ցուցումները չկատարելը, որը հանգեցրել է կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի.*

1. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի և Կոմիտեի կազմակերպական-վերլուծական բաժնի պետի տեղակալ Մ.Ա-ի (գործուղված՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին վերաբերյալ 15.05.2019թ. ԿՀՈ 7 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....35

2. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության նախկինում՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական

բաժնի ավագ քննիչ ներկայում՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի վերաբերյալ 18.09.2019թ. ԿՀՈ 14 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....68

3. Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի պետի տեղակալ Ն.Մ-ի և նույն քննչական բաժնի նախկին պետ, ներկայում Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 6-րդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի վերաբերյալ 02.10.2019թ. ԿՀՈ 19 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....88

V. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 7-րդ ենթակետ՝ *օրենքով նախատեսված դատավարական ժամկետները խախտելը.*

1. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Հ--ի վերաբերյալ 06.06.2019թ. ԿՀՈ 10 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***.....50

3. Այլ իրավախախտումների վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող իրավադրույթ - Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդված՝ *քննչական բաժնի պետի լիազորությունները.*

1. Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ե.Հ-ի և նույն վարչության քննիչ Մ.Բ-ի վերաբերյալ 23.01.2019թ. ԿՀՈ 2 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***.....15

2. Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ե.Հ-ի և նույն վարչության ավագ քննիչ Գ.Թ-ի վերաբերյալ 20.03.2019թ.

ԿՀՈ 3 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***.....19

3.Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի և Կոմիտեի կազմակերպական-վերլուծական բաժնի պետի տեղակալ Մ.Ա-ի (գործուղված՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին վերաբերյալ 15.05.2019թ. ԿՀՈ 7 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***.....35

4.Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի և Կոմիտեի կազմակերպական-վերլուծական բաժնի պետի տեղակալ Մ.Ա-ի (գործուղված՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին վերաբերյալ 15.05.2019թ. ԿՀՈ 7 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....35

5.Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի վերաբերյալ 03.07.2019թ. ԿՀՈ 12 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***....59

6. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի պետ Ա.Վ-ի և նույն բաժնի ՀԿԳ քննիչ Դ.Մ-ի վերաբերյալ 02.10.2019թ. ԿՀՈ 18 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական խախտման խախտման փաստի առկայությունը)***.....83

7.Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անի-ի քննչական բաժնի պետի տեղակալ Ն.Մ-ի և նույն քննչական բաժնի նախկին պետ, ներկայում Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 6-րդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի վերաբերյալ 02.10.2019թ. ԿՀՈ 19 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապա-***

հական փաստի առկայությունը, սակայն Դ.Ֆ-ի մեղքի բացակայությունը).....88

II. Մեկնաբանվող իրավադրույթ - «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մաս՝ *օրենքով նախատեսված պարտականությունները չկատարելը, ոչ պատշաճ կատարելը.*

1. Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ե-ի վերաբերյալ 25.09.2019թ. ԿՀՈ 17 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է կարգապահական փաստի առկայությունը)***.....80

III. Մեկնաբանվող իրավախախտում՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 12.03.2015թ. թիվ 11-Ա հրաման՝ *քննության պլանավորման և միասնականության վերաբերյալ ուղեցույց.*

1.Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի վերաբերյալ 03.07.2019թ. ԿՀՈ 12 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական փաստի առկայությունը)***.....59

2. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի նախկին տեղակալ Ա.Ա-ի և ՀԿԳ քննիչ Վ.Ա-ի վերաբերյալ 04.09.2019թ. ԿՀՈ 13 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական փաստի առկայությունը)***.....63

IV. Մեկնաբանվող իրավախախտում՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրաման՝ *«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին».*

1. Կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Գ-ի վերաբերյալ 18.09.2019թ. ԿՀՈ 15 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական փաստի առկայությունը)***.....72

V. Մեկնաբանվող իրավադրույթ՝ «***Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին***» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետեր.

1. «դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» տույժի կիրառման նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին ***(Հանձնաժողովը եզրակացություն է տվել տույժի կիրառման նպատակահարմարության մասին)***.....101

2. «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» տույժի կիրառման նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին ***(Հանձնաժողովը եզրակացություն է տվել տույժի կիրառման նպատակահարմարության մասին)***.....104

V. Մեկնաբանվող իրավադրույթ՝ *«Արդարադատության ակադեմիայի մասին»* Հայաստանի Հանրապետության **օրենքի 17-րդ հոդվածի.**

1. Ունկնդիր Մ.Գ-ի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին 15.05.2019թ. որոշում ***(Հանձնաժողովը դիմել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին Մ.Գ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ)*** 106

2. Ունկնդիր Գ.Ա-ին տարկետում տրամադրելու մասին 03.07.2019թ. որոշում ***(Հանձնաժողովը Գ.Ա-ին տրամադրել է տարկե-տում)***.....108

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Վ.Մ-ի վերաբերյալ

23 հունվարի 2019թ. ԿՀՈ 1

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական Վ.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել Կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ Ա.Կրկյաշարյանի միջնորդությունը՝ Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Վ.Մ-ի վարույթում քննված թիվ 90362918, 90363818 և 90364718 քրեական գործերով նախաքննության ընթացքում վերջինիս կողմից լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Վ.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 90362918,

90363818 և 90364718 քրեական գործերով նախաքննության ընթացքում համակարգչային եղանակով կազմել և նյութերին է կցել Արագածոտնի մարզի զինկոմիսարիատի զորակոչային բաժանմունքի պետ Վ.Ասատրյանի անունից լրացված 27.08.2018թ., 28.08.2018թ. թվագրմամբ բացատրություններ, ինչպես նաև՝ նույն եղանակով կազմված, նույն անձին որպես վկա հարցաքննելու վերաբերյալ 13.09.2018թ. թվագրմամբ արձանագրություններ, որոնց վրա բացակայել են ինչպես հարցաքննվողի (բացատրություն տվողի) և քննիչի ստորագրությունները, այնպես էլ ցանկացած այլ ձեռագիր գրառում, այսինքն՝ քննիչն առանց վկա Վ.Ասատրյանի մասնակցության փորձ է արել կազմել հարցաքննության արձանագրություն՝ քողարկելով իր անգործությունը: Արդյունքում՝ քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի պահանջները:

Առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Վ.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ նախկինում վարույթում քննված նմանատիպ այլ քրեական գործերով Արագածոտնի մարզի զինկոմիսարիատի զորակոչային բաժանմունքի պետ Վ.Ասատրյանին հարցաքննել է, ուստի, ունենալով նրա կենսաչափական տվյալները, հիշյալ քրեական գործերով Վ.Ասատրյանի տվյալներով կազմել է բացատրություններ և որպես վկա հարցաքննության վերաբերյալ արձանագրություններ՝ հիմք ընդունելով անձանց զորակոչիկի անձնական գործում առկա տվյալները՝ նպատակ ունենալով դրանք հետագայում ծանոթացման և ստորագրման ներկայացնել Վ.Ասատրյանին, ինչը մոռացել է և չի ներկայացրել:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Վ.Մ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ քրեական գործերով նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ քննիչ Վ.Մ-ի 25.10.2018թ. միջնորդությունը և քրեական գործերը ստացվել են Շիրակի կայազորի զինվորական դատախազությունում, որոնց

ուսումնասիրությամբ պարզվել է վերոգրյալը և Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի կողմից Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին ներկայացվել է զեկուցագիր, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստվել են նյութեր, որով քրեական գործ հարուցելը մերժվել է՝ քննիչ Վ.Մարգարյանի արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Նույն՝ չվերացված որոշմամբ փաստվել է, որ քննիչ Վ.Մ-ի կողմից չի պահպանվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածով սահմանված վկայի հարցաքննության կարգը, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 35-349-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմը բացակայել է այն պատճառաբանությամբ, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքը համարվում է միջին ծանրության և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ չավարտված հանցագործություն է համարվում ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստությունը: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովն ի պաշտոնե պարզեց նաև, որ քննիչ Վ.Մ-ի կողմից խախտվել է նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքերի համար սահմանված 10 օրվա ընթացքում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, (...): Արդյունքում՝ քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասի և 206-րդ հոդվածի պահանջները: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Վ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապե-

տության օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Կոմիտեի կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 90362918, 90363818 և 90364718 քրեական գործերով նախաքննության ընթացքում համակարգչային եղանակով Արագածոտնի մարզի զինկոմիսարիատի զորակոչային բաժանմունքի պետ Վ.Ասատրյանի անունից 27.08.2018թ., 28.08.2018թ. թվագրմամբ բացատրություններ լրացնելու, ինչպես նաև՝ նույն եղանակով, նույն անձին որպես վկա հարցաքննելու վերաբերյալ 13.09.2018թ. թվագրմամբ անստորագիր և առանց ձեռագիր այլ գրառումների արձանագրություններ կազմելու, նյութերին կցելու և այդ կերպ իր անգործությունը քողարկելու համար քննիչ Վ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ Մ.Բ-ի և նույն վարչության պետի տեղակալ Ե.Հ-ի վերաբերյալ

23 հունվարի 2019թ. ԿՀՈ 2

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ, առաջին դասի խորհրդական Մ.Բ-ի և վերջինիս անմիջական վերադաս՝ նույն վարչության պետի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ե.Հ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության դատախազության Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Հ.Պողոսյանի միջնորդությունը՝ Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ Մ.Բիշարյանի վարույթում քննված թիվ 34100518 քրեական գործով վերջինիս և անմիջական վերադաս՝ նույն վարչության պետի տեղակալ Ե.Հակոբյանի կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Մ.Բ-ին և վերջինիս անմիջական վերադաս Ե.Հ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցված թիվ 34100518 քրեական գործով քննիչ Մ.Բ-ն, 03.08.2018թ. քրեական գործը վարույթ ընդունելուց հետո առ 29.11.2018թ-ը, առանց իրավաչափ նպատակի, քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություն չի կատարել՝ անհարկի ձգձգելով նախաքննության ժամկետները, այն է՝ 03.08.2018թ. դեպքի վայրի զննության ընթացքում տարբեր հատվածներից հայտնաբերված և վերցված արնանման նյութի հետքերով համապատասխան՝ դատակենսաբանական կամ դատագենետիկական, փորձաքննություն չի նշանակել՝ պարզելու համար հայտնաբերված արնանման նյութի հետքերի պատկանելիությունը, որպիսի պայմաններում՝ խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Մ.Բ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ հիշյալ փորձաքննությունը չնշանակելը պայմանավորված է եղել կասկածի շուրջ որպես վկա հարցաքննված Վ.Անտոնյանի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելու պատճառով, ինչից ենթադրել է, որ վերջինս փորձանմուշ տալուց հրաժարվելու է: Իսկ հետագայում աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով չի նշանակել հիշյալ փորձաքննությունը: Հանձնաժողովի այն հարցին, թե այդ պարագայում ինչու տուժողից ստացված արյան փորձանմուշով չի նշանակել հիշյալ փորձաքննությունը, քննիչ Մ.Բ-ն հիմնավոր պատասխան չտվեց:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Մ.Բ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը վարույթում քննված թիվ 34100518 քրեական գործով, 03.08.2018թ. քրեական գործը վարույթ ընդունելուց հետո առ 29.11.2018թ-ը, առանց իրավաչափ նպատակի, քննչական և այլ դատավարական գործողություն կատա-

ռելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություն չի կատարել, այն է՝ 03.08.2018թ. դեպքի վայրի զննության ընթացքում տարբեր հատվածներից հայտնաբերված և վերցված արնանման նյութի հետքերով համապատասխան՝ դատակենսաբանական կամ դատագենետիկական, փորձաքննություն չի նշանակել, որը բերել է նաև նախաքննության ժամկետների անհարկի ձգձգման, ինչով իսկ քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Մ.Բ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Իր հերթին, քննիչ Մ.Բ-ի անմիջական ղեկավար Ե.Հ-ն, չի հետևել քննիչի վարույթում քննվող քրեական գործով գործողությունները ժամանակին կատարելուն, ինչով իսկ խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ անմիջական ղեկավար Ե.Հ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ըստ էության հայտնեց, որ իր հիշելով հերթական արձակուրդից վերադարձել է 29.08.2018թ-ին, հիշյալ փորձաքննությունը նշանակելու վերաբերյալ քրեական գործի նյութերի շապիկի վերաբերյալ կատարել է ձեռագիր գրառումներ, սակայն, քննիչ Մ.Բ-ն այդպես էլ չի նշանակել փորձաքննությունը, ինքն էլ հիշյալ ժամանակահատվածում զբաղված է եղել նաև իր հսկողության ներքո գտնված այլ քննիչների, այդ թվում՝ նորանշանակ քննիչների վարույթում քննված քրեական գործերի նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնելով և հետևել է նրանց աշխատանքին:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով անմիջական ղեկավար Ե.Հ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովն ի պաշտոնե պարզեց, որ քննիչ Մ.Բ-ի անմիջական ղեկավար Ե.Հ-ն թիվ 34100518 քրեական գործի նախաքննության ընթացքում չի հետևել քննիչի կողմից հիշյալ որոշումը կայացնելուն և նախաքննության ժամկետների

անհարկի ձգձգման նկատմամբ, ինչով իսկ Ե.Հ-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ անմիջական ղեկավար Ե.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 34100518 քրեական գործը 03.08.2018թ. վարույթ ընդունելուց հետո առ 29.11.2018թ.-ը դեպքի վայրից վերցված արնանման նյութի հետքերով դատակենսաբանական կամ դատագենետիկական փորձաքննություն չնշանակելու դրվագով քննիչ Մ.Բ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Քննիչ Մ.Բ-ի անմիջական ղեկավար Ե.Հ-ի կողմից իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննված թիվ 34100518 քրեական գործի նախաքննության ընթացքում քննիչի կողմից նախաքննության ժամկետների անհարկի ձգձգման նկատմամբ չհետևելու դրվագով Ե.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Թ-ի և նույն վարչության պետի տեղակալ Ե.Հ-ի վերաբերյալ

20 մարտի 2019թ. ԿՀՈ 3

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Թ-ի և նույն վարչության պետի տեղակալ Ե.Հ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայաստանի Հանրապետության դատախազության Շիրակի մարզի դատախազի տեղակալ Ա.Ավետիսյանի միջնորդության առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ ավագ քննիչ Գ.Թ-ի վարույթում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով քննված թիվ 68158118 քրեական գործով նախաքննության ընթացքում վերջինս և նրա անմիջական ղեկավար Ե.Հ-ն իրենց լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Գ.Թ-ին և անմիջական ղեկավար Ե.Հ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. **Քրեական գործով շուրջ 5 ամիս տևած նախաքննության**

ընթացքում՝ 11.07.2018թ. վարույթ ընդունելուց հետո առ 15.12.2018թ-ը, քննիչը չի հարցաքննել առերևույթ հանցանք կատարած անձանց՝ Վ.Գևորգյանին, վերջինիս կնոջը և որդուն, մինչդեռ նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություններում որպես հիմնավորում նշել է հիշյալ պատճառաբանությունը: Ընդ որում, քրեական գործը վարույթ ընդունելուց 3 ամիս անց նոր միայն՝ 10.10.2018թ. քննիչը ծանուցագրեր է ուղարկել Վ.Գևորգյանին, նրա կնոջը և որդուն՝ 2018թ. հոկտեմբերի 15-ին և նոյեմբերի 2-ին որպես վկա հարցաքննության ներկայանալու համար, սակայն, վերջիններս ծանուցագրում նշված ժամկետում չեն ներկայացել և ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների մասին չեն իրազեկել, որպիսի պայմաններում՝ քննիչը որոշում չի կայացրել նրանց բերման ենթարկելու մասին:

2. Բացի այդ, նախաքննության շուրջ 5 տևած նախաքննության ընթացքում տուժող Ն.Քոչարյանին ճանաչել է տուժող, սակայն, չի հարցաքննել հանցագործության բոլոր դրվագների վերաբերյալ, որոշումներ է կայացրել Ս.Մինասյանին և Ս.Քոչարյանին տուժող ճանաչելու մասին, սակայն, որոշումները տուժողներին չի ծանոթացրել, վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները չի բացատրել և չի հարցաքննել: Արդյունքում՝ անհարկի ձգձգվել են նախաքննության ժամկետները և չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Գ.Թ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ քննարկվող ժամանակահատվածում աշխատել է ծանրաբեռնված, վարույթում ունեցել է կալանավորական գործեր: Բացի այդ, դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի հետ բանավոր կարգով քննարկել են Վ.Գևորգյանին և նրա ընտանիքի անդամներին հարցաքննելու հանգամանքը և նկատի ունենալով, որ հետաքննության մարմնում նրանց վերաբերյալ նախապատրաստվում են մեկ այլ նյութեր, որոշել են դրանք ստանալ, միացնել հիշյալ

քրեական գործին և նոր միայն բոլոր դեպքերով հանգամանքների շուրջ հարցաքննել նշված անձանց: Իսկ տուժողներին հարցաքննելու և որոշումները ծանոթացնելու վերաբերյալ հայտնեց, որ վերջին քրեական գործը միացրել է թիվ 68158118 քրեական գործին 31.10.2018թ-ին, իսկ մինչ այդ աշխատել է ծանրաբեռնված գրաֆիկով, այդ իսկ պատճառով հիշյալ տուժողներին չի կանչել և հարցաքննել, նշանակել է տուժողների նկատմամբ ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին քննիչի բացատրությանն ըստ էության նույնաբովանդակ բացատրություն տվեց նաև անմիջական ղեկավար Ե.Հ-ն՝ հավելելով, որ ամենամյա արձակուրդից 2018թ. օգոստոսի վերջերին վերադառնալուց հետո քննիչին հանձնարարել է կանչել և հարցաքննել Վ.Գևորգյանին և նրա ընտանիքի անդամներին, սակայն, տեղեկանալով, որ դատախազի հետ հիշյալ պայմանավորվածությունն է եղել, որոշել են սպասել, անձամբ ինքն է նշված հարցի վերաբերյալ քննարկում ունեցել դատախազի հետ:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Գ.Թ-ին և Ե.Հ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը միջնորդության մեջ վերը նշված երկու դրվագները քննարկեց միասին, քանի որ ինստիտուցիոնալ առումով դրանք նույն հանգամանքին են վերաբերում և փոխկապակցված են: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամանակով դրսևորել է անգործություն, այն է՝ թիվ 68158118 քրեական գործով հրատապություն ներկայացնող քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Արդյունքում՝ քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ

քննիչ Գ.Թ-ի արարքում հիշյալ դրվագով առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Իր հերթին, քննիչ Գ.Թ-ի անմիջական վերադաս՝ Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ե.Հ-ն պատշաճ չի կատարել քրեադատավարական օրենքով իրեն վերապահված լիազորությունները՝ չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, ինչը հանգեցրել է նախաքննության ժամկետների անհարկի ձգձգման, ինչով իսկ խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Գ.Թ-ին և Ե.Հ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Ե.Հ-ն չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն: Արդյունքում՝ Ե.Հ-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ե.Հ-ի արարքում հիշյալ դրվագով առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 68158118 քրեական գործով, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամանակով անգործություն դրսևորելու, հրատապություն ներկայացնող քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ ժամանակին չկատարելու դրվագով ավագ քննիչ Գ.Թ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

2. Ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն չհետևելու դրվագով Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ե.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու
մարզային քննչական վարչության
ավագ քննիչ Գ.Վ-ի վերաբերյալ

20 մարտի 2019թ. ԿՀՈ 4
ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Գ.Վ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել տուժող Ռ.Կարապետյանի դիմումի հիման վրա Կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետ Ա.Մելիքյանի միջնորդությունը՝ Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Վ-ի կողմից վարույթում քննված թիվ 19160418 քրեական գործով իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Գ.Վ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Թիվ 19160418 քրեական գործով 08.10.2018 թվականին որոշումներ է կայացրել Ս.Ղուբաթյանի նկատմամբ քրեական հե-

տապնդում չիրականացնելու և վարույթը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով կասեցնելու մասին, սակայն, որոշումները պատշաճ ծանուցմամբ չի ուղարկել տուժող Ռ.Կարապետյանին՝ վերջինիս պարզաբանելով որոշումների բողոքարկման կարգը և ժամկետները: Արդյունքում՝ քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի և 262-րդ հոդվածի 1-ի մասի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Գ.Վ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ըստ էության հայտնեց, որ հիշյալ որոշումները տուժող Ռ.Կարապետյանին ուշ է ուղարկել, քանի որ նա էր այդպես խնդրել՝ ընտանիքում վիճաբանություն, կռիվ չլինելու համար, խոստանալով հետագայում ներկայանալ և ստանալ: Ինքն էլ, հիշյալ որոշումները կայացնելուց հետո, հաշվի առնելով Ռ.Կարապետյանի խնդրանքը, չի ուղարկել: Ըստ էության՝ Գ.Վ-ն ընդունեց իր թերացումը և հայտնեց, որ կատարել է անհրաժեշտ հետևություններ:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Գ.Վ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը թիվ 19160418 քրեական գործով 08.10.2018 թվականին որոշումներ է կայացրել Ս.Ղուբաթյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու և վարույթը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով կասեցնելու մասին, սակայն, որոշումները պատշաճ ծանուցմամբ չի ուղարկել տուժող Ռ.Կարապետյանին՝ վերջինիս պարզաբանելով որոշումների բողոքարկման կարգը և ժամկետները: Արդյունքում՝ քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի և 262-րդ հոդվածի 1-ի մասի պահանջները: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Գ.Վ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 19160418 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և վարույթը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով կասեցնելու մասին 08.10.2018 թվականին կայացրած որոշումները պատշաճ ծանուցմամբ տուժողին չուղարկելու դրվագով քննիչ Գ.Վ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնի պետի տեղակալ Գ.Մ-ի վերաբերյալ

20 մարտի 2019թ. ԿՀՈ 5

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնի պետի տեղակալ, առաջին դասի խորհրդական Գ.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության պետ Ա.Մանթաշյանի և Հայաստանի Հանրապետության դատախազության Լոռու մարզի դատախազության դատախազ Ա.Ավագյանի միջնորդությունները՝ Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնի պետի տեղակալ Գ.Մ-ի վարույթում քննված թիվ 52101718 քրեական գործով վերջինիս կողմից լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է Գ.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Քրեական գործով Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանի Զև 8 տեղեկանքում մեղադրյալ Վ.Ուռուսյանի կենսաչափական տվյալները ոչ ճիշտ նշելու արդյունքում 21.01.2019 թվականին որոշում է կայացրել թիվ 52101718 քրեական գործով վարույթը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիմքով կարճելու և Վ.Ուռուսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ համաներման մասին օրենքի ընդունման հիմքով՝ կիրառելով 01.11.2018թ. ընդունված և 06.11.2018թ. ուժի մեջ մտած «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 5-րդ կետի պահանջները: Մինչդեռ, մեղադրյալ Վ.Ուռուսյանի նկատմամբ վերջին տասը տարվա ընթացքում կիրառված է եղել համաներման ակտ և նա ազատվել է պատժի կրումից, ինչի պայմաններում՝ հիշյալ օրենքի դրույթները նույն օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետի (բ) ենթակետի համաձայն՝ մեղադրյալ Վ.Ուռուսյանի նկատմամբ չէին կարող տարածվել: Արդյունքում՝ քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և հիշյալ օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետի (բ) ենթակետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Գ.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին ըստ էության բացատրություն տվեց, որ վերոգրյալը ծանրաբեռնվածության և տեխնիկական վրիպակի արդյունքում է եղել, որևէ դիտավորություն չի ունեցել:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Գ.Մ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Գ.Մ-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության

օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված խնդիրների իրականացումը, որի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները՝ մեղադրյալի նախկին դատվածության առկայության վերաբերյալ համապատասխան տեղեկանք ստանալը և հետազոտումը ոչ պատշաճ կատարելով, որը հանգեցրել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի և համաներման մասին օրենքի հիշյալ դրույթների խախտմանը, ինչի արդյունքում՝ անձն անհիմն ազատվել է քրեական պատասխանատվությունից: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Գ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 52101718 քրեական գործով վարույթը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիմքով կարճելու և Վ.Ուռուսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին օրենքի կոպիտ խախտմամբ և անհիմն որոշում կայացնելու դրվագով քննիչ Գ.Մինասյանի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի նախկին ավագ քննիչ (ներկայում Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քրեական գործերի քննության աջակցության վարչության ՀԿԳ ավագ քննիչ) Ա.Մ-ի վերաբերյալ

04 ապրիլի 2019թ. ԿՀՈ 6

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի նախկին ավագ քննիչ /ներկայում Կոմիտեի քրեական գործերի քննության աջակցության վարչության ՀԿԳ ավագ քննիչ/, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայաստանի Հանրապետության դատախազության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Կ.Պետրոսյանի՝ թիվ 12100618 քրեական գործով միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ավագ քննիչ Ա.Մ-ի վարույթում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին և 266-րդ հոդվածի 1-ին մասերի հատկանիշներով քննված թիվ 12100618 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրա-

կանացնելիս առերևույթ խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումը ըստ ստորև նշված դրվագի.

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին և 266-րդ հոդվածի 1-ին մասերի հատկանիշներով հարուցված թիվ 12100618 քրեական գործով 09.09.2018թ. որոշում է կայացրել հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին, սակայն որոշումը փաստացի չի ուղարկել փորձագիտական հիմնարկ, որի հետևանքով մինչև 04.12.2018թ. հիշյալ փորձաքննությունը փաստացի մնացել է առանց կատարման, ինչի հետևանքով անհարկի ձգձգվել է նախաքննության ժամկետները: Արդյունքում՝ քննիչը կոպիտ կերպով խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության 09.09.2018թ. որոշումը և ուղեկցական գրությունը քննչական բաժնի գրասենյակում չի ելքագրել, այլ ելքագրել է անձամբ՝ 14.09.2018թ՝ ընդ որում, որպես նույնականացման համար, նշել է վարույթում քննվող մեկ այլ քրեական գործի համար, սակայն հստակ չպարզաբանեց՝ որոշումը փորձագիտական հիմնարկ ուղարկել է, թե ոչ: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի անդամի հստակեցնող հարցին, թե հնարավոր է, որ որոշումն ուղեկցական գրությամբ ընդհանրապես չի ուղարկել փորձագիտական հիմնարկ, քննիչը չժխտեց այդ հանգամանքը, միաժամանակ որևէ հիմնավորող փաստաթուղթ (անդորրագիր) չներկայացրեց՝ հայտնելով, որ այդպիսիք չկան: Քննիչը հավելեց նաև, որ այդ ամենը հնարավոր է թույլ տված լինի ծանրաբեռնվածության հետևանքով:

Ուսումնասիրելով նյութերը, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը քրեական գործով 09.09.2018թ. որոշում է կայացրել հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին, սակայն որոշումը փաստացի չի ուղարկել փորձագիտական հիմնարկ, որի հետևանքով մինչև 04.12.2018թ. հիշյալ փորձաքննությունը փաստացի մնացել է առանց կատարման, ինչի հետևանքով անհարկի ձգձգվել է նախաքննության ժամկետները: Արդյունքում՝ քննիչը կոպիտ կերպով խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

ՈՐՈՇԵՑ

1. Թիվ 12200618 քրեական գործով հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին կայացված որոշումը փորձագիտական հիմնարկ չուղարկելու դրվագով Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի նախկին ավագ քննիչ /ներկայում Կոմիտեի քրեական գործերի քննության աջակցության վարչության ՀԿԳ ավագ քննիչ/ Ա.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կազմակերպական-վերլուծական բաժնի պետի տեղակալ Մ.Ա-ի /գործուղված Կետրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին/ վերաբերյալ

15 մայիսի 2019թ. ԿՀՈ 7

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կազմակերպական վերլուծական բաժնի պետի տեղակալ Մ.Ա-ի /գործուղված Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին/ նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ավագ քննիչ Տ.Մ-ի վարույթում քննված թիվ 13870018 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս

առերևույթ խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Տ.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

29.01.2019թ. քննիչը ստանալով նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի գրավոր 15.01.2019թ. ցուցումը, չի կատարել դրա պահանջների մի մասը, մասնավորապես՝ որոշում չի կայացրել առերևույթ հանցանք կատարած անձ Ն.Ենգիբարյանի բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին և 28.02.2018թ. որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կասեցնելու մասին: Ընդ որում՝ 07.03.2019թ. նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից քննիչի կայացրած հիշյալ երկու որոշումներն էլ վերացվել են՝ ցուցումի պահանջներն ամբողջությամբ չկատարելու պատճառաբանությամբ, այսինքն՝ խուզարկություն կատարելու պարտադիր անհրաժեշտության մասին արձանագրումից հետո դարձյալ այն չի կատարվել քննիչի կողմից: Արդյունքում խուզարկությունը կատարվել է ցուցումը ստանալուց շուրջ 2 ամիս անց, որի ընթացքում ոչինչ չի հայտնաբերվել և չի առգրավել, որպիսի պայմաններում քննիչի կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Տ.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ Ք.Թահմազյանի տանից կատարված գողության երեք հաղորդումների և վերջինիս ծեծի ենթարկելու դեպքերի առթիվ Հայաստանի Հանրապետության ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում հարուցվել են քրեական գործեր և նախաքննություն կատարելու համար ուղարկվել Կենտրոն և Նորք-

Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին: Քրեական գործերը միացվել են իրար, նախաքննությունն իրականացվել է մեկ վարույթում՝ 13870018 քրեական գործի համարի ներքո, հետագայում թիվ 13870018 քրեական գործից մաս անջատելու մասին որոշումներ են կայացվել անհայտ անձի կողմից Ք.Թահմազյանի տանից զգալի չափի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դեպքերի առթիվ: Տ.Մ-ն հայտնեց նաև, որ հսկող դատախազի կողմից ցուցումը տրվել է 2019թ. Հունվարի 15-ին թիվ 13870018 քրեական գործով, իսկ հիշյալ քրեական գործով գաղտնի հափշտակվել է հագուստ և պարան, որոնց անհատական հատկանիշների մասին տուժողը հարցաքննությունների ընթացքում ոչինչ չի կարողացել հայտնել, չի նկարագրել հագուստը, ուստի նման պայմաններում որպես ինքնուրույն սուբյեկտ, նպատակահարմար չի գտել Ն.Ենգիբարյանի բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու և որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կասեցնելու մասին:

Վերջինս հավելեց նաև, որ նախաքննության ընթացքում հիշյալ հարցը քննարկվել է նույն հսկող դատախազի հետ և վերջինս համակարծիք է եղել, որ նման պայմաններում բացակայում է խուզարկություն կատարելու հանգամանքը:

Ընդհանուր առմամբ ըստ էության նույնաբովանդակ բացատրություն տվեց նաև ավագ քննիչ Տ.Մ-ի անմիջական ղեկավար, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կազմակերպական-վերլուծական բաժնի պետի տեղակալ Մ.Ա-ն /գործուղված Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին/:

ՈՒսումնասիրելով նյութերը, վերհանելով նախաքննության ընթացքում տուժող Ք.Թահմազյանի ցուցմունքները Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը չի բողոքարկել և չի կատարել հսկող դատախազի օրինական ցուցումի պահանջը: Բացի այդ, քրեական գործով անկախ հսկող դատախազի տրված ցուցումից, իրավական և փաստական ակնհայտ հիմքեր են առկա եղել առերևույթ հանցանք կատարած անձ Ն.Ենգիբարյանի բնակարանում

խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին, ինչը քննիչի կողմից չի կատարվել, որպիսի պայմաններում քննիչի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը: Արդյունքում խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Իր հերթին, ավագ քննիչ Տ.Մ-ի անմիջական ղեկավար, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին գործուղված Մ.Ա-ն պատշաճ չի կատարել քրեադատավարական օրենքով իրեն վերապահված լիազորությունները՝ չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով դատախազի ցուցումը կատարելուն, ինչով իսկ խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Մ.Ա-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ հսկող դատախազի ցուցումի բոլոր կետերը կատարվել են, բացի Ն.Ենգիբարյանի բնակարանում խուզարկություն կատարելուց: Բացի այդ, վերջինս հայտնեց նաև, որ անմիջական հսկողություն է իրականացնում քննչական բաժնի 7 քննիչների աշխատանքների նկատմամբ, որոնց վարույթում քննվում է շուրջ 250 քրեական գործ, անձամբ իր վարույթում ևս քննվում են քրեական գործեր, և նման պայմաններում հնարավոր են բացթողումներ, վարչարարության վատ իրականացում: Մ.Ա-ն հայտնեց նաև, որ քրեական գործերը դատախազություն են ուղարկում բաժնի պետի ստորագրությամբ, տվյալ դեպքում քննիչը քրեական գործը կասեցնելուց հետո ներկայացրել է բաժնի պետի ստորագրմանը և գործը դատախազություն է ուղարկվել առանց իր գիտության, ուստի վերջինս հնարավորություն չի ունեցել իրականացնելու իր լիազորությունները, մասնավորապես, որ գործը կասեցվել է առանց դատախազի ցուցումի՝ խուզարկություն

կատարելու պահանջի կատարման: Վերջինս խնդրեց վերջնական որոշում կայացնելիս հաշվի առնել նաև իր ծանրաբեռնվածությունը:

ՈՒսումնասիրելով նյութերը և ամփոփելով իրականացված կարգապահական վարույթի արդյունքները Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ տվյալ դեպքում առկա է կարգապահական խախտումը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ամրագրված դրույթների խախտում, սակայն հաշվի առնելով, որ Մ.Ա-ն տվյալ իրավիճակում փաստացի զրկված է եղել իր լիազորություններն իրականացնելու հնարավորությունից, ուստի նրա արարքում բացակայում է մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի գրավոր, օրինական ցուցումի պահանջը չկատարելու դրվագով Տ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

2. Իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով դատախազի ցուցումի պահանջները կատարելուն չհետևելու դրվագով տվյալ դեպքում առկա է կարգապահական խախտումը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ամրագրված դրույթների խախտում, սակայն հաշվի առնելով, որ Մ.Ա-ն

տվյալ իրավիճակում փաստացի զրկված է եղել իր լիազորություն-ներն իրականացնելու հնարավորությունից, ուստի նրա արարքում բացակայում է մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Գ-ի վերաբերյալ

06 հունիսի 2019թ. ԿՀՈ 8

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Գ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Պողոսյանի և Հայաստանի Հանրապետության դատախազության Շիրակի մարզի դատախազության դատախազ Մ.Մարտիրոսյանի միջնորդությունների առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ավագ քննիչ Ա.Գ-ի վարույթում քննված թիվ 68109818 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ա.Գ-ի վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Առերևույթ հանցանք կատարած անձ Ա.Սարգսյանին օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության դեպքում (շուրջ 1 ամսվա ընթացքում) քրեական դա-

տավարության մասնակցի, տվյալ դեպքում մեղադրյալի կարգավիճակ չի տվել, նրան չի հարցաքննել: Վերջինիս մեղսունակությանը հարցը պարզելու նպատակով դատահոգեբուժական փորձաքննության չի նշանակել: Արդյունքում քննիչի կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

2. Քննիչը անհրաժեշտ և բավարար միջոցներ չի ձեռնարկել 2018թ. դեկտեմբերի 6-ին Գ.Մկրտչյանի նկատմամբ կայացված դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը վերջինիս հանձնելու վերաբերյալ, այն պայմաններում, երբ նախաքննության ընթացքում իրական հնարավորություն է ունեցել փորձաքննություն նշանակելու մասին որոշումն ավելի վաղ Գ.Մկրտչյանին տրամադրելու, սակայն չի տրամադրել: Արդյունքում՝ հիշյալ որոշումը Գ.Մկրտչյանին տրամադրվել է միայն 13 օր անց՝ 2019թ. դեկտեմբերի 19-ին: Նույն օրը Գ.Մկրտչյանը ներկայացել է դատաբժշկական փորձաքննության և ստացված փորձագետի եզրակացության համաձայն՝ Գ.Մկրտչյանի մարմնի վրա մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել: Գ.Մկրտչյանի փորձաքննությանն ուշ ներկայանալու և բժշկական փաստաթղթերի բացակայության պատճառով որոշել, թե ինչ մարմնական վնասվածքներ է ստացել՝ հնարավոր չէ, քանի որ մարմնական վնասվածքները կարող էին անհետ ապաքինվել 14 օրվա ընթացքում: Այսինքն՝ քննիչի գործողությունները ողջամտորեն հանգեցրել են ապացույցների կորստի և դատաբժշկական փորձագետի եզրակացությունը, որը քրեական գործով կարող էր դիտվել որպես առանցքային ապացույց՝ այդպիսին այլևս չի կարող հանդիսանալ, ընդ որում՝ փորձագետի եզրակացությունն էական նշանակություն ուներ նաև առերևույթ հանցանք կատարած անձ՝ Ա.Սարգսյանի արարքին քրեաիրավական ճիշտ գնահատական տալու համար, որպիսի պայմաններում՝ քննիչի կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական

դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ մասի և 248-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Հիշյալ դրվագներով առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ Ա.Գ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ ընդունում է իր կողմից դատավարական խախտումներ թույլ տալու հանգամանքը, ինչը հիմնականում պայմանավորված է եղել իր ծանրաբեռնվածությամբ: Ա.Գ-ն հավելեց նաև, որ չի ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ կայացված դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը ոստիկանության ծառայող Գ.Մկրտչյանին ավելի շուտ տրամադրելու վերաբերյալ, ինչի հնարավորությունն իրականում մի քանի անգամ ունեցել է: Գիտակցում է իր գործողությունների հետևանքով ապացույցի կորստի հանգամանքը:

ՈՒսումնասիրելով նյութերը, լսելով Ա.Գ-ին Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը վերը նշված երկու դրվագները քննարկեց միասին, քանի որ դրանք փոխկապակցված են իրար:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության դեպքում քրեական դատավարության մասնակցի, տվյալ դեպքում մեղադրյալի կարգավիճակ չի տվել առերևույթ հանցանք կատարած անձ՝ Ա.Սարգսյանին, նրան չի հարցաքննել: Բացի այդ, վերջինիս մեղսունակությանը հարցը պարզելու նպատակով դատահոգեբուժական փորձաքննության չի նշանակել: Բացի այդ, անհրաժեշտ և բավարար միջոցներ չի ձեռնարկել 2018թ. դեկտեմբերի 6-ին Գ.Մկրտչյանի նկատմամբ կայացված դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը վերջինիս հանձնելու վերաբերյալ, այն պայմաններում, երբ նախաքննության ընթացքում իրական հնարավորություն է ունեցել փորձաքննություն նշանակելու մասին որոշումն ավելի վաղ Գ.Մկրտչյանին տրամադրելու, սակայն չի տրամադրել: Արդյունքում՝ հիշյալ որոշումը Գ.Մկրտչյանին տրամադրվել է միայն 13 օր անց՝ 2019թ. դեկտեմբերի 19-ին: Նույն օրը Գ.Մկրտչյանը ներկայացել է դատաբժշկական փորձաքննության

և ստացված փորձագետի եզրակացության համաձայն՝ Գ.Մկրտչյանի մարմնի վրա մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել: Այսինքն՝ քննիչի գործողությունները ողջամտորեն հանգեցրել են ապացույցների կորստի և դատաբժշկական փորձագետի եզրակացությունը, որը քրեական գործով կարող էր դիտվել որպես առանցքային ապացույց՝ այդպիսին այլևս չի կարող հանդիսանալ, ընդ որում՝ փորձագետի եզրակացությունն էական նշանակություն ուներ նաև առերևույթ հանցանք կատարած անձ՝ Ա.Սարգսյանի արարքին քրեաիրավական ճիշտ գնահատական տալու համար: Քննիչի կողմից խախտվել են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ մասի և 248-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որպիսի պայմաններում քննիչի արարքներում առկա են կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության դեպքում Ա.Սարգսյանին մեղադրյալի կարգավիճակ չտալու, չհարցաքննելու, վերջինիս մեղսունակությանը հարցը պարզելու նպատակով դատահոգեբուժական փորձաքննության չնշանակելու, ինչպես նաև Գ.Մկրտչյանի նկատմամբ կայացված դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը վերջինիս ուշ տրամադրելու դրվագներով Ա.Գ-ի արարքներում

առկա են կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Խ-ի վերաբերյալ

06 հունիսի 2019թ. ԿՀՈ 9

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական Դ.Խ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Լոռու մարզի դատախազի տեղակալ Ա.Շիրոյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ավագ քննիչ, Դ.Խ-ի վարույթում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով /2 դրվագ/, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով /1 դրվագ/ քննված թիվ 55151719 քրեական գործով նախաքննության ընթացքում վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Դ.Խ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումը ըստ ստորև նշված դրվագի.

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով (2 դրվագ), Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (1 դրվագ) հարուցված թիվ 55151719 քրեական գործով իր լիազորություններն իրականացնելիս կոպիտ կերպով խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, 69-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ մասի 2-րդ կետի, 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, այն է՝ զրկել է Գևորգ Կիրակոսյանին կասկածյալի կարգավիճակում՝ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը նրան հայտարարելու պահից պաշտպան ունենալու և օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից պաշտպանվելու փաստացի հնարավորությունից, պաշտպանի պարտադիր մասնակցության պայմաններում՝ կասկածյալ, ապա նաև մեղադրյալ Գ.Կիրակոսյանի քրեական դատավարության լեզվին ոչ բավարար չափով տիրապետելու պայմաններում օրենքով սահմանված կարգով վերջինիս չի ապահովել պաշտպանով:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ ավագ քննիչ, Դ.Խ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ Գևորգ Կիրակոսյանը բավարար չափով տիրապետում է հայերեն գրավոր և բանավոր լեզվին, ինչը նախաքննության ընթացքում հիմնավորվել է <<հիմնական ընդհանուր կրթություն ստանալու մասին>> վկայականով, համաձայն որի՝ նա դպրոցում ուսանել է հայոց լեզու և ստացել է բավարար գնահատական: Դ.Խաչատրյանը հայտնեց նաև, որ Գ.Կիրակոսյանը դպրոցն ավարտելուց հետո ընդունվել, ուսանել ու ավարտական դիպլոմ է ստացել Ալավերդու արհեստագործական ուսումնարանում, որտեղ դասավանդումը տարվել է հայերեն լեզվով:

Ըստ էության Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին նույնաբովանդակ բացատրություն տվեց նաև ավագ քննիչ Դ.Խ-ի անմիջական ղեկավար՝ Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի պետ Էդվարդ Կարապետյանը:

Ուսումնասիրելով նյութերը, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ թիվ 55151719 քրեական գործով իր լիազորություններն իրականացնելիս քննիչը կոպիտ կերպով խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, 69-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ մասի 2-րդ կետի, 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Մասնավորապես՝ պաշտպանի պարտադիր մասնակցության պայմաններում զրկել է Գևորգ Կիրակոսյանին կասկածյալի, մեղադրյալի կարգավիճակում՝ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը նրան հայտարարելու պահից պաշտպան ունենալու և օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից պաշտպանվելու փաստացի հնարավորությունից, Գ.Կիրակոսյանի քրեական դատավարության լեզվին ոչ բավարար չափով տիրապետելու պայմաններում օրենքով սահմանված կարգով վերջինիս չի ապահովել պաշտպանով:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ ավագ քննիչ Դ.Խ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 55151719 քրեական գործով պաշտպանի պարտադիր մասնակցության պայմաններում՝ կասկածյալ, ապա նաև մեղադրյալ Գ.Կիրակոսյանի քրեական դատավարության լեզվին ոչ բավարար չափով տիրապետելու պայմաններում օրենքով սահմանված կարգով

վերջինիս պաշտպանով չապահովելու, օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից պաշտպանվելու փաստացի հնարավորությունից զրկելու դրվագով Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Խ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Հ-ի վերաբերյալ՝ գործուղված Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին

06 հունիսի 2019թ. ԿՀՈ 10

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա.Հ-ի (գործուղված Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ՝ Հայաստանի Հանրապետության դատախազության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Վ.Պողոսյանի միջնորդության առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ թիվ 13585518 քրեական գործի նախաքննության ընթացքում քննիչ Ա.Հ-ն իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ թույլ է տվել քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Հ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Թիվ 13585518 քրեական գործով նախաքննության ընթացքում 12.03.2019թ-ին որոշում է կայացրել կասկածյալ Ա.Խորենյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ կասկածյալի հետ տուժողի հաշտվելու՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով, սակայն, քրեական գործին վերաբերող դատավարական որոշումը քրեական գործի նյութերին չի կցել, ըստ էջերի չի համարակալել՝ դրանց կցման ժամանակագրական կարգով, և որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում նախաքննության օրինականության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին՝ օրինականությունը ստուգելու նպատակով, ինչպես նաև՝ կողմերին չի ուղարկել: Արդյունքում՝ քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 28-րդ կետի և 262-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Առերևույթ իրավախախտումներ թույլ տալու վերաբերյալ քննիչ Ա.Հ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ 12.03.2019թ. որոշում է կայացրել կասկածյալ Ա.Խորենյանի նկատմամբ քրեական գործով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Քանի որ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ԵՔՎ Կենտրոնականի բաժնից ստացված օպերատիվ գրության համաձայն՝ գողության կասկածանքով, բացի Ա.Խորենյանից, նույն օրը բերման էր ենթարկվել նաև Ն.Սաֆարյանը, ուստի, նույն օրն օպերատիվ հանձնարարություն է տվել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կենտրոնական բաժնին՝ միջոցներ ձեռնարկելու և պարզելու Ն.Սաֆարյանի առնչությունը դեպքին: Այնուհետև, հիշյալ որոշումն ուղեկցական գրությամբ ներկայացրել է բաժնի պետի տեղակալ Է.Աղայանին՝ գրությունը ստորագրելու և

որոշումը սահմանված կարգով դատախազություն ուղարկելու նպատակով: Է.Աղայանի կողմից գրությունը ստորագրելուց հետո գնացել է քննչական բաժնի գրասենյակ՝ այն ելքագրելու և սահմանված կարգով վարչական շրջանների դատախազություն ուղարկելու նպատակով, սակայն, ընդմիջման պատճառով, գրասենյակը փակ է եղել: Դրանից հետո ձեռնամուխ է եղել վարույթում քննվող այլ քրեական գործերով անհետաձգելի քննչական գործողություններ կատարելուն, իսկ վարույթում տվյալ ժամանակ քննվել է 30 քրեական գործ, այդ թվում՝ մի քանի մեծածավալ և բազմադրվագ քրեական գործեր, ուստի, զբաղված լինելով դրանցով նախաքննության կատարմամբ՝ հիշյալ որոշումը մոռացել է սահմանված ժամկետում ուղարկել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին, երկրորդ օրինակն էլ՝ կարել քրեական գործի նյութերում: Այնուհետև, հիշյալ քրեական գործով կատարել է մի շարք այլ քննչական և դատավարական գործողություններ, որից հետո 21.03.2019թ. որոշում է կայացրել թիվ 13985518 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և գործով վարույթը կարճելու մասին, որը սահմանված ժամկետում օրինականությունը ստուգելու նպատակով ուղարկել է վարչական շրջանների դատախազություն: Հիշյալ ծանրաբեռնվածության պայմաններում՝ օրեր անց իր աշխատանքային սեղանին նկատել է հիշյալ՝ 12.03.2019թ. կայացված որոշումը, որը մոռացել էր ուղարկել վարչական շրջանների դատախազություն, և այն անմիջապես փոխանցել է գրասենյակ՝ դատախազություն ուղարկելու նպատակով: Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու որոշումը կասկածյալ Ա.Խորենյանին չուղարկելու մասով հայտնեց, որ նախաքննության տվյալ փուլում՝ 21.03.2019թ. կայացված որոշման դրությամբ, Ա.Խորենյանը կասկածյալի դատավարական կարգավիճակ չի ունեցել, բացի այդ, վերջինս դիմումով հայտնել է, որ չի ցանկանում ծանոթանալ քրեական գործի նյութերին և ստանալ պատճենները, ուստի, այդ որոշման մասին հայտնել է միայն տուժողին: Հայտնեց նաև, որ 12.03.2019թ.՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը սահմանված

ժամկետում դատախազություն չուղարկելը պայմանավորված է եղել այլ ստորաբաժանումից Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին գործուղման մեջ գտնվելու, աննախադեպ ծանրաբեռնվածության պայմաններում աշխատելու արդյունքում: Միաժամանակ, քննիչը, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց իր թերացումը՝ հիշյալ 12.03.2019թ. որոշումը գործի նյութերին չկարելու համար՝ պնդելով, որ դատ տեղի է ունեցել տեխնիկական վրիպման և ծանրաբեռնվածության արդյունքում թույլ տրված անուշադրության հետևանքով:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Հ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ի պաշտոնե, պարզեց, որ թեև հիշյալ որոշումը կայացվել է քննիչի կողմից, սակայն, չի կցվել քրեական գործի նյութերին և օրենքով սահմանված ժամկետներում չի ուղարկվել կողմերին և դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին՝ օրինականությունը ստուգելու նպատակով: Քննիչի արարքում թեև առկա է քրեադատավարական օրենքի խախտում, սակայն, հաշվի առնելով քննիչի աշխատանքային գերծանրաբեռնվածությունը և այն, որ դատավարական խախտումը հետևանք չի առաջացրել, ուստի, հիշյալ իրավախախտումը կոպիտ չի կարող դիտվել: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Հ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին ենթակետով, 48-50-րդ կետերով,

ՈՐՈՇԵՑ

1. 12.03.2019թ-ին՝ Ա.Խորենյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին կայացրած որոշումը քրեական գործի նյութերին չկցելու, ըստ էջերի չհամարակալելու և որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում նախաքննության օրինականության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին, ինչպես նաև՝ կողմերին չուղարկելու վերաբերյալ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Հ-ի (գործուղված Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին) արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննչ Ա.Ա-ի վերաբերյալ

03 հուլիսի 2019թ. ԿՀՈ 11

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին հասցեագրված Մարիետտա Փարսյանի 12.03.2019թ. դիմումի առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ թիվ 58213118 քրեական գործի նախաքննության ընթացքում ՀԿԳ քննիչ Ա.Ա-ն իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ թույլ է տվել քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ քննիչ Ա.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված թիվ 58213118 քրեական գործով որպես վկա կանչված Մարիետտա Փարսյանի 12.03.2019թ. հարցաքննության ընթացքում վերջինիս հնարավորություն չի տվել արձանագրությունում իր հայտարարությունները գրավոր արձանագրելու, մինչդեռ, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենքի համաձայն՝ հարցաքննվող անձի հայտարարությունները քննիչի կողմից մերժման ենթակա չեն: Բացի այդ, ՀԿԳ քննիչ Ա.Ա-ն վկա Մ.Փարսյանին հնարավորություն չի տվել գրավոր բացատրելու ցուցմունք տալուց հրաժարվելու պատճառները, ինչի մասին չի արձանագրել նաև իր կողմից կազմված հիշյալ արձանագրությունում, ինչը հանգեցրել է նաև վկայի իրավունքների խախտման, այն է՝ վկան իրավունք ունի անձամբ շարադրել մինչդատական վարույթի ընթացքում տրվող իր ցուցմունքները:

Արդյունքում՝ ՀԿԳ քննիչ Ա.Ա-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ պարբերության, 86-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի և 209-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Առերևույթ իրավախախտումներ թույլ տալու վերաբերյալ ՀԿԳ քննիչ Ա.Ա-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ 2019թ. մարտի 12-ին, առավոտյան ժամը 11-ի սահմաններում, երբ վարույթի մեկ այլ քրեական գործով իրականացրել է վկայի հարցաքննություն, իր աշխատասենյակի դուռը բացել է փաստաբան Գիվի Հովհաննիսյանը և հայտնել, որ ցուցմունք տալուց հրաժարվում են, պետք է ներկայանա Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե, շտապում է: Գ.Հովհաննիսյանին և վերջինիս վստահորդ Մարիետտա Փարսյանին խնդրել է սպասել միջանցքում, մինչև ավարտի հարցաքննությունն ու նոր ընդունի նրանց՝ որպեսզի հարցաքննի Մ.Փարսյանին: Մոտ կես ժամ անց, նրանց հրավիրել է աշխատասենյակ և գործող կարգի համաձայն վկայի արձանագրության մեջ լրացրել Մ.Փարսյանի կեն-

սագրական տվյալները, նրան բացատրել, թե որ քրեական գործով է հրավիրվել հարցաքննության, ինչ կարգավիճակով, ինչպես նաև վկայի բոլոր իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում սահմանադրական իրավունքը՝ նրա, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունքներ տալուց հրաժարվելու մասին: Մ.Փարսյանը լսել է, տեղեկացվել, սակայն ոչինչ չի հայտնել, նրա փոխարեն խոսել է փաստաբան Գ.Հովհաննիյանը, ով Մարիետտային հայտնել է հետևյալը. «մենք ապօրինություն չենք կատարել, որի պատճառով հրաժարվում ենք ցուցմունք տալ»: Դրանից հետո, առանց արձանագրությունը ստորագրելու, նրանք դուրս են եկել աշխատասենյակից ու գնացել: Ինքն արձանագրության վերջնամասում նշել է, որ վկան փաստաբանի հորդորով հրաժարվել է ցուցմունք տալ և ստորագրել այն:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Կոմիտեի կարգապահական հանձնաժողով հրավիրված՝ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալի պաշտոնակատար Ռ.Մախմուդյանին, քննիչներ Տ.Միրզոյանին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ բացակայում է իրավախախտման փաստը, բացի Մ.Փարսյանի դիմումից, ՀԿԳ քննիչ Ա.Ա-ի կողմից քրեադատավարական օրենքի խախտման վերաբերյալ այլ ապացույցներ ձեռք չեն բերվել, որպիսի պայմաններում Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ ՀԿԳ քննիչ Ա.Ա-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին ենթակետով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վկա Մ.Փարսյանի իրավունքները խախտելու դրվագով ՀԿԳ քննիչ Ա.Ա-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի վերաբերյալ

03 հուլիսի 2019թ. ԿՀՈ 12

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության դատախազության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ժ.Չիչոյանի միջնորդությունը՝ Կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 15190818 քրեական գործով վարույթն իրականացրած ավագ քննիչ Տ.Մ-ի կողմից իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Տ.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված և վարույթում քննվող թիվ 15190818 քրեական գործով նախաքննության ժամկետը լրացել է 28.03.2019 թվականին, սակայն, նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ նոր միջնորդություն չի հարուցել: Արդյունքում՝ քննիչ Տ.Մ-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014 թվականի թիվ 11 Ա հրամանով հաստատված «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» հավելվածի 8-րդ կետի և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Տ.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ըստ էության ընդունեց իր մեղավորությունը՝ հայտնելով, որ նշվածը տեղի է ունեցել աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունքում:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Տ.Մ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը թիվ 15190818 քրեական գործով նախաքննության ժամկետը 28.03.2019 թվականին լրանալու պայմաններում նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ նոր միջնորդություն չի հարուցել, ինչի արդյունքում խախտել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014 թվականի թիվ 11 Ա հրամանով հաստատված «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» հավելվածի 8-րդ կետի և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ

Տ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. 2019 թվականի ապրիլի 23-ի և մայիսի 15-ի համապատասխան գրություններով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից հսկողության նպատակով պահանջված քրեական գործը, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամանակ չի տրամադրել, ինչով իսկ քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 15.05.2019 թվականի N 76-Լ հանձնարարականի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Տ.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ըստ էության հայտնեց, որ դատախազի հիշյալ գրությունների հիման վրա քրեական գործը չի ուղարկել ստուգման համար՝ հասկանալու համար, թե ինչ լուծում պետք էր նախորդ դրվագով նշված՝ նախաքննության ժամկետը բաց թողնելու հարցը:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Տ.Մ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը 2019 թվականի ապրիլի 23-ի և մայիսի 15-ի համապատասխան գրություններով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից հսկողության նպատակով պահանջված քրեական գործը, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամանակ չի տրամադրել, ինչի արդյունքում խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, իսկ հետագայում նաև Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 15.05.2019 թվականի N 76-Լ հանձնարարականի պահանջները: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Տ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապե-

տության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով,

ՈՐՈՇԵՑ

1. Թիվ 15190818 քրեական գործով նախաքննության ժամկետը 28.03.2019 թվականին լրանալու պայմաններում նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ նոր միջնորդություն չհարուցելու դրվագով ավագ քննիչ Տ.Մուրադյանի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. 2019 թվականի ապրիլի 23-ի և մայիսի 15-ի համապատասխան գրություններով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից հսկողության նպատակով պահանջված քրեական գործը, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամանակ չտրամադրելու դրվագով ավագ քննիչ Տ.Մուրադյանի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի նախկին տեղակալ Ա.Ա-ի և ՀԿԳ քննիչ Վ.Ա-ի վերաբերյալ

04 սեպտեմբերի 2019թ. ԿՀՈ 13

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Վ.Ա-ի և նույն բաժնի պետի նախկին, ներկայում՝ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի տեղակալ Ա.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանի միջնորդությունը՝ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Վ.Ա-ի վարույթում քննված թիվ 13151519 քրեական գործով վերջինիս և նույն բաժնի պետի նախկին, ներկայում՝ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Ա.Ա-ի կողմից իրենց լիազորություններն

իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է Վ.Ա-ին և Ա.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Թիվ 13151519 քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ 05.04.2019թ. թվագրմամբ միջնորդությունը քննիչ Վ.Ա-ն Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի գրասենյակում ելքագրման ներկայացրել է նախաքննության ժամկետը լրանալու օրը՝ 08.04.2019թ., որը Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում մուտքագրվել է նախաքննության ժամկետը լրանալու հաջորդ օրը՝ 09.04.2019թ.: Արդյունքում՝ քննիչ Վ.Ա-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 11 Ա հրամանով հաստատված «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» հավելվածի 8-րդ կետի և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Վ.Ա-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին ըստ էության բացատրություն տվեց, որ վերոգրյալը պայմանավորված է եղել աշխատանքային ծանրաբեռնվածությամբ, թեև ձևականորեն իր արարքը պարունակել է առերևույթ խախտումներ, սակայն, դրա արդյունքում քրեական գործով բացասական հետևանքներ չեն առաջացել, կողմերի իրավունքները չեն ոտնահարվել, նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունը հսկող դատախազի կողմից բավարարվել է, իսկ հետագայում՝ քրեական գործով վարույթը կարճվել:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Վ.Ա-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Վ.Ա-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 11 Ա հրամանով հաստատված «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» հավելվածի 8-րդ կետի պահանջները: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Վ.Ա-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Իր հերթին, քննիչ Վ.Ա-ի անմիջական վերադաս՝ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի նախկին տեղակալ Ա.Ա-ն չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի կողմից վարույթում գտնվող քրեական գործով նախաքննության ժամկետները պահպանելու նկատմամբ, ինչով իսկ խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանով հաստատված հավելվածի 8-րդ կետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Վ.Ա-ի անմիջական վերադաս Ա.Ա-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին ըստ էության բացատրություն տվեց, որ ինքը քննիչից պահանջել է գրել հիշյալ միջնորդությունը, սակայն աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված քննիչը չի հասցրել սահմանված ժամկետում գրել, իսկ երբ գրել է, տվյալ օրվա ամսաթվով չի կարողացել ելքագրել՝ քննչական բաժնի գրասենյակի աշխատանքային ժամերն ավարտվելու պատճառաբանությամբ, այդ իսկ պատճառով հիշյալ միջնորդությունը ելքագրվել է 08.04.2019թ.: Խնդրեց ներողամիտ գտնվել, հաշվի առնել քննիչ Վ.Ա-ի գործնական

հմտությունները, այն, որ վերջինիս վարույթում հիմնականում քննվել են ծանր և առանձնապես ծանր հանցագործության դեպքերով հարուցված քրեական գործեր, քննիչ Վ.Ա-ն բարեխիղճ աշխատակից է:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով անմիջական վերադաս Ա.Ա-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Ա.Ա-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 11 Ա հրամանով հաստատված «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» հավելվածի 8-րդ կետի պահանջները: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Ա-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով,

ՈՐՈՇԵՑ

1. Թիվ 13151519 քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ 05.04.2019թ. թվագրմամբ միջնորդությունը նախաքննության օրինականության նկատմամբ դատավարական հսկողություն իրականացնող դատախազին սահմանված ժամկետներում չներկայացնելու դրվագով ՀԿԳ քննիչ Վ.Ա-ի արարքում

առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Թիվ 13151519 քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ 05.04.2019թ. թվագրմամբ միջնորդությունը նախաքննության օրինականության նկատմամբ դատավարական հսկողություն իրականացնող դատախազին իրեն անմիջականորեն ենթակա քննիչի կողմից սահմանված ժամկետներում ներկայացնելուն չհետևելու դրվագով անմիջական վերադաս Ա.Ա-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության նախկինում՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ ներկայումս՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի վերաբերյալ

18 սեպտեմբերի 2019թ. ԿՀՈ 14
ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի նախկին ավագ քննիչ ներկայում՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայաստանի Հանրապետության դատախազության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազներ՝ Լ.Մարկոսյանի, Ն.Մովսիսյանի և Ռ.Մանուկյանի միջնորդությունների առթիվ կատարված ծառայողական քննություններով պարզվել է, որ ավագ քննիչ Տ.Մ-ի վարույթում քննված թիվ 09169317, 13874518 և 13951118 քրեական գործերով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրակա-

նացնելիս առերևույթ խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Տ.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. 2019թ. մարտի 25-ի և մայիսի 21-ի համապատասխան գրություններով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից հսկողության նպատակով պահանջված թիվ 09169317 քրեական գործն առանց իրավաչափ նպատակի, տրամադրել է միայն ս/թ հունիսի 17-ին՝ շուրջ 80 օր անց:

2. 2019թ. մարտի 26-ի, ապրիլի 25-ի և մայիսի 23-ի համապատասխան գրություններով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից հսկողության նպատակով պահանջված թիվ 13874518 քրեական գործն առանց իրավաչափ նպատակի տրամադրվել է միայն հունիսի 7-ին, շուրջ 70 օր անց:

3. 03.04.2019թ., 03.05.2019թ., 04.06.2019թ. և 04.07.2019թ. գրություններով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը նախաքննություն իրականացնող քննիչից ստուգման նպատակով պահանջել է վարչական շրջանների դատախազություն ուղարկել թիվ 13951118 քրեական գործը, որը սակայն առանց իրավաչափ նպատակի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում ստացվել է միայն 2019 թվականի օգոստոսի 5-ին, ինչի հետևանքով դատախազը զրկվել է քրեադատավարական օրենքով սահմանված իր բացառիկ լիազորությունից:

Արդյունքում քննիչի կողմից վերը նշված դրվագներով խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 15.05.2019թ. N 76-Լ հանձնարարականի պահանջները՝ ողջամիտ ժամկետներում քրեական գործը դատախազի պահանջով տրամադրելու վերաբերյալ:

Հիշյալ դրվագներով առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ Տ.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ ընդունում է իր կողմից դատավարական խախտումներ թույլ տալու հանգամանքը, ինչը հիմնականում պայմանավորված է եղել իր ծանրաբեռնվածությամբ: Տ.Մ-ն հավելեց նաև, որ չի ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ քրեական գործերը ստուգման նպատակով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազներին տրամադրելու վերաբերյալ, ինչի հնարավորությունն իրականում մի քանի անգամ ունեցել է: Նշեց նաև դատախազների հետ ունեցած անձնական ոչ բարյացկամ հարաբերությունների մասին:

ՈՒսումնասիրելով նյութերը, լսելով Տ.Մ-ին Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը վերը նշված երեք դրվագները քննարկեց միասին: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ դատախազների կողմից հսկողության նպատակով պահանջվող քրեական գործերը տևական ժամանակ, առանց իրավաչափ նպատակի քննիչի կողմից չեն տրամադրվել հսկող դատախազներին, որի արդյունքում դատախազները զրկվել են իրենց դատավարական լիազորություններն իրականացնելուց, ինչը նաև սահմանադրական նորմ է, որի հետևանքով տուժել է նախաքննության շահը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը: Խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 15.05.2019թ. N 76-Լ հանձնարարականի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը

սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների կողմից հսկողության նպատակով պահանջվող քրեական գործերը տևական ժամանակ, առանց իրավաչափ նպատակի դատախազներին չտրամադրելու դրվագներով Տ.Մ-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Գ-ի վերաբերյալ (գործուղված Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին)

18 սեպտեմբերի 2019թ. ԿՀՈ 15

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Մ.Գ-ի (գործուղված Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին), նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գրությունը՝ քննիչ Մ.Գ-ի կողմից իր լիազորություններն իրականացնելիս նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է Մ.Գ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Թիվ 15153019 քրեական գործի նախաքննության ընթացքում 22.06.2019թ-ին, ժամը 22:00-ից հետո, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենքով չթույլատրվող ժամերի, բացառությամբ անհետաձգելի դեպքերի, այցելել է Երևան քաղաքի Արամի փողոցի 42/1 շենքի երկրորդ հարկում տեղակայված «Ժան Պոլ» սրճարան՝ ցանկանալով կատարել քննչական գործողություն՝ վկաների հարցաքննություն՝ գիշերային ժամերին, և արժանացել է սրճարանում ներկա գտնվածների դիտողությանը և պարսավանքին: Այսինքն՝ քննիչ Մ.Գ-ն իր հիշյալ գործողություններով չի ապահովել պահանջվող մասնագիտական որակավորում և գործնական հմտություններ՝ այդ կերպ դրսևորելով Կոմիտեի և նրա ծառայողների համբավն արատավորող անվայել արարք: Արդյունքում՝ քննիչ Մ.Գ-ն թույլ է տվել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-L հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 27-րդ կետի 1-ին, 4-րդ ենթակետի խախտումներ:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Մ.Գ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին ըստ էության բացատրություն տվեց, որ քրեական գործի նախաքննության շահերից ելնելով, ունենալով տեղեկություններ, որ նմանատիպ ակումբներն իրենց աշխատանքը երեկոյան ուշ ժամերի են սկսում այցելել է Երևան քաղաքի Արամի փողոցի 42/1 շենքի երկրորդ հարկում տեղակայված «Ժան Պոլ» սրճարան՝ ցանկանալով կատարել քննչական գործողություն՝ վկաների հարցաքննություն, սակայն արժանացել է սրճարանում ներկա գտնվածների դիտողությանը, ուստի նման պայմաններում չի կարողացել այն իրականացնել և նշված անձանց հայտնելով, որ հարցաքննության ներկայանան քննչական բաժին ծանուցագրով՝ հեռացել է:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Մ.Գ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Մ.Գ-ն խախտել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 27-րդ կետի 1-ին, 4-րդ ենթակետի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Մ.Գ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 15153019 քրեական գործի նախաքննության ընթացքում 22.06.2019թ-ին, ժամը 22:00-ից հետո, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենքով չթույլատրվող ժամերի, քննչական գործողություն կատարելու նպատակով ժամանցային հաստատություն այցելելու և իր գործողություններով պահանջվող մասնագիտական որակավորում և գործնական հմտություններ չապահովել, այդ կերպ դրսևորելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և նրա ծառայողների համբավն արատավորող անվայել արարք կատարելու համար ավագ քննիչ Մ.Գ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի նախկին ՀԿԳ քննիչ, ներկայում՝ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Ղ-ի վերաբերյալ

18 սեպտեմբերի 2019թ. ԿՀՈ 16

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի նախկին ՀԿԳ քննիչ, ներկայում՝ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Ղ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել Կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Պողոսյանի և Հայաստանի Հանրապետության դատախազության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Ամիրխանյանի միջնորդությունները՝ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի նախկին ՀԿԳ քննիչ, ներկայում՝ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Ղ-ի վարույթում քննված թիվ 63201016 քրեական գործով վերջի-

նիս կողմից իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է Ռ.Ղ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Թիվ 63201016 քրեական գործի նախաքննության ընթացքում 19.10.2018թ-ին նշանակել է լրացուցիչ դատաձեռագրաբանական փորձաքննություն, որը քրեական գործի նյութերի հետ միասին քննչական բաժնի տարածքային բաժնում ելքագրվելուց հետո առձեռն առաքման նպատակով անձամբ ստանալով հիշյալ որոշումը չի մուտքագրել համապատասխան փորձագիտական հիմնարկ, իսկ թիվ 63201016 քրեական գործի նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի 2019թ. փետրվարի 18-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է, որում նշվել է նաև հիշյալ փորձաքննության նշանակման և առանց այդ փորձաքննության եզրակացության որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի ինքնությունը պարզելը հնարավոր չլինելու հանգամանքները: Այնուհետև, իր անգործությունը քողարկելու նպատակով, առանց քրեական գործով վարույթը օրենքով սահմանված կարգով վերսկսելու մասին որոշում կայացնելու, քննիչը 10.06.2019թ-ին կայացրել է նոր՝ լրացուցիչ դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշում, որը քրեական գործի նյութերի հետ միասին մուտքագրել է համապատասխան փորձագիտական հիմնարկ: Արդյունքում՝ քննիչ Ռ.Ղ-ն չի պահպանել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 248-րդ հոդվածի 1-ին մասի և 260-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ռ.Ղ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին հասցեագրված իր դիմումով հայտնել է, որ ընդունում է իր կողմից առերևույթ թույլ տրված դատավարական խախտումները, որոնց վերաբերյալ պնդել է նախնական ուսումնասիրության ընթացքում իր տված բա-

ցատրությունները: Հայտնել է նաև, որ հետայսու առավել աչալուրջ և զգոն կլինի աշխատանքային պարտականությունների կատարման մեջ՝ խնդրելով Կոմիտեի նախագահի միջնորդությունը քննարկել իր բացակայությամբ:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ռ.Ղ-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 248-րդ հոդվածի 1-ին մասի և 260-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ռ.Ղ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 63201016 քրեական գործով 19.10.2018թ-ին նշանակված լրացուցիչ դատաձեռագրաբանական փորձաքննությունը առձեռն առաքման նպատակով անձամբ ստանալով համապատասխան փորձագիտական հիմնարկ չներկայացնելու դրվագով քննիչ Ռ.Ղ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Թիվ 63201016 քրեական գործով 10.06.2019թ-ին լրացուցիչ դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելուց առաջ քրեական գործով վարույթը օրենքով սահմանված կարգով վերսկսելու մասին որոշում չկայացնելու դրվա-

գով քննիչ Ռ.Ղ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ե-ի վերաբերյալ

25 սեպտեմբերի 2019թ. ԿՀՈ 17

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Ա.Ե-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ՝ Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության պետ Ա.Մանթաշյանի միջնորդության առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ թիվ 52100319 քրեական գործի նախաքննության ընթացքում քննիչ Ա.Ե-ն իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ թույլ է տվել քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Ե-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Ավագ քննիչ Ա.Ե-ն քննիչի պարտականությունները ոչ պատշաճ կատարելով ընդգրկված լինելով թիվ 52100319 քրեական գործով քննչական խմբի կազմում, չունենալով այդպիսի քրեադատավարական իրավունք և պարտականություն, քրեական գործի նախաքննության ընթացքում դեպքին ականատես և ակտիվ վկա Գ.Սիրադեղյանին ուղղորդել է կոնկրետ փաստաբանների ընտրու-

թյան հարցում: Արդյունքում՝ քննիչ Ա.Ե-ն չի պահպանել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջները:

Առերևույթ իրավախախտումներ թույլ տալու վերաբերյալ քննիչ Ա.Ե-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ թիվ 52100319 քրեական գործով ի թիվս այլ քննիչների ընդգրկված է եղել քննչական խմբի կազմում, իսկ տվյալ գործով հիմնական քննչական և դատավարական գործողությունները կատարել է խմբի ղեկավար Մ.Փանոսյանը: Հայտնեց, որ Գարիկ Սիրադեղյանի հետ շփվել է նրան բերման ենթարկելուց հետո՝ 12.02.2019թ., ժամը 04:30-ի սահմաններում, երբ պետք է նրան հարցաքններ: Վերջինիս տվյալները լրացնելուց հետո բանավոր խոսակցության ընթացքում, Գ.Սիրադեղյանը ցանկություն է հայտնել փաստաբան ունենալու և իրեն հարցրել, թե ինչ փաստաբան գիտի, ով կարող է իր շահերը պաշտպանել: Ինքն ուղղակի նշել է Վանաձոր քաղաքի՝ իր գիտեցած փաստաբանների անուն ազգանունները, առանց որևէ մեկին խորհուրդ տալու կամ երաշխավորելու և քանի որ գիշերային ժամ էր, փաստաբանով ներկայանալը շատ դժվար կլիներ, այդ պատճառով նրան տվել է հարցաքննության ներկայանալու մասին ծանուցագիր: Հետագայում քննչական բաժնի պետից տեղեկացել է, որ Գարիկ Սիրադեղյանը հարցաքննվել է, իսկ թե հետագայում ինչ է եղել, դրանից տեղեկություն չունի:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Ե-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ թեև քննիչի կողմից վկային տրվել է մի քանի փաստաբանի անուն ազգանուն, սակայն կոնկրետ որևէ փաստաբանի ընտրության հարցում չի ուղղորդել և չի երաշխավորել: Հաշվի առնելով, որ վկան չի ուղղորդվել կոնկրետ փաստաբանի ընտրության հարցում, ուստի, հիշյալ իրավախախտումը կոպիտ չի կարող դիտվել: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Ե-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին ենթակետով, 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործի նախաքննության ընթացքում դեպքին ականատես և ակտիվ վկա Գ.Սիրադեղյանին կոնկրետ փաստաբանների ընտրության հարցում ուղղորդելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ե-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:
2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապահատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի պետ Ա.Վ-ի և նույն բաժնի ՀԿԳ քննիչ Դ.Մ-ի վերաբերյալ

02 հոկտեմբերի 2019թ. ԿՀՈ 18

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի պետ (այսուհետ՝ անմիջական վերադաս) Ա.Վ-ի և նույն բաժնի ՀԿԳ քննիչ (այսուհետ՝ քննիչ) Դ.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել Կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Պողոսյանի միջնորդությունը՝ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանպարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի ՀԿԳ քննիչ Դ.Մ-ի վարույթում քննված թիվ 60176918 քրեական գործով նախաքննության ընթացքում վերջինիս և նույն բաժնի պետ Ա.Վ-ի կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է Դ.Մ-ին և Ա.Վ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Թիվ 60176918 քրեական գործի նախաքննության ընթացքում, քննչական և դատավարական այլ գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, «Նիսսան» մակնիշի ավտոմեքենայի ձախ կողային հատվածում առկա վնասվածքները այլ ավտոմեքենայի կողմից թողնված լինելու հնարավոր հանգամանքը փորձաքննության առարկա չի դարձրել և «Նիսսան» մակնիշի ավտոմեքենայի ձախ կողային վնասված հատվածներում այլ ավտոմեքենայի ներկածածկույթի հետքերի առկայությունը և քննության համար էական նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար չի նշանակել լրացուցիչ դատահետքաբանական և դատաքիմիական փորձաքննություն, որի արդյունքում՝ 22.04.2019թ. քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո նշանակված փորձաքննությամբ նշված հանգամանքը հնարավոր չի եղել պարզել՝ «Նիսսան» մակնիշի ավտոմեքենան վերաներկման գտնվելու պատճառով, ինչը հանգեցրել է ապացույցի կորստի և նախաքննության ժամկետների անհարկի ձգձգման: Արդյունքում՝ քննիչ Դ.Մ-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Դ.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ըստ էության չընդունեց մեղավորությունը՝ բերելով իր պատճառաբանությունները՝ հավելելով, որ հիշյալ փորձաքննությունը նշանակելու անհրաժեշտությունը չի գտել, քանի որ գործում առկա այլ տվյալներով, այդ թվում՝ վկաների ցուցմունքներով հաստատված է եղել «Նիսսան» մակնիշի ավտոմեքենայի երթևեկությանը խոչընդոտ հանդիսացած «Մերսեդես-Բենց» մակնիշի ավտոմեքենայի դեպքի վայրում գտնվելու հանգամանքը:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Դ.Մ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ըստ էության բացի մեղադրյալի ցուցմունքներից, որ «Մերսեդես-Բենց» մակնիշի ավտոմե-

քենան բախվել է իր վարած «Նիսսան» մակնիշի ավտոմեքենային, ինչի արդյունքում տեղի է ունեցել վրաերթը, այլ փաստական տվյալով այդ հանգամանքը չի պարզվել, ուստի, անհրաժեշտ է եղել հիշյալ փորձաքննությունը նշանակել, ինչը չկատարելը հանգեցրել է ապացույցների ձեռքբերման անդառնալի կորստի: Արդյունքում՝ քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Դ.Մ-ի արարքում հիշյալ դրվագով առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Քննիչ Դ.Մ-ի անմիջական վերադաս Ա.Վ-ն ըստ էության տվեց քննիչի բացատրությանը նույնաբովանդակ բացատրություն:

2. Թիվ 60176918 քրեական գործի նախաքննության ընթացքում՝ 20.11.2018թ. դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին որոշման նկարագրական մասում մեղադրյալ Ս.Ստեփանյանի ցուցմունքը շարադրելիս արձանագրել է, որ «Մերսեդես-Բենց» մակնիշի ավտոմեքենան ընդհարվել է իր ավտոմեքենայի առջևի ձախ անվաթևի կողային հատվածին, որի հետևանքով նա նույն պահին իր ավտոմեքենայի առջևի մասով վրաերթի է ենթարկել Ա.Գոյունյանին, մինչդեռ, մինչև դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը կայացնելու պահը Ս.Ստեփանյանն իր ցուցմունքներում «Մերսեդես-Բենց» մակնիշի ավտոմեքենայի՝ իր ավտոմեքենային բախվելու հետևանքով Ա.Գոյունյանին վրաերթի ենթարկելու վերաբերյալ ուղղակի տվյալներ չի հայտնել, ինչի արդյունքում դատաավտոտեխնիկական փորձագետին տրամադրվել է քրեական գործի նյութերից չբխող ելակետային տվյալ, ինչն էլ էական նշանակություն է ունեցել հետագայում փորձաքննության կատարման և տրված եզրակացության համար: Արդյունքում՝ քննիչ Դ.Մ-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Դ.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված

բացատրությամբ ըստ էության չընդունեց մեղավորությունը՝ բերելով իր պատճառաբանությունները՝ հավելելով, որ գործով պարզված հանգամանքների հիման վրա ամբողջական և ելակետային տվյալ ընդունելով մեղադրյալի ցուցմունքը նշանակել է հիշյալ փորձաքննությունը:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Դ.Մ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ըստ էության քննիչը հիշյալ փորձաքննությունը նշանակելու մասին որոշման մեջ արտացոլել է մեղադրյալի 13.11.2018թ. ցուցմունքի բովանդակությունը: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Դ.Մ-ի արարքում հիշյալ դրվագով բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Իր հերթին, քննիչ Դ.Մ-ի անմիջական ղեկավար Ա.Վ-ն թիվ 60176918 քրեական գործի նախաքննության ընթացքում չի հետևել քննիչի կողմից հիշյալ որոշումը կայացնելուն և դրանով պայմանավորված նախաքննության ժամկետների պահպանման նկատմամբ, ինչով իսկ Ա.Վ-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ անմիջական վերադաս Ա.Վ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ըստ էության չընդունեց իր մեղավորությունը:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով անմիջական վերադաս Ա.Վ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Ա.Վ-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ անմիջական վերադաս Ա.Վ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդ-

վածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 60176918 քրեական գործով նախաքննության ընթացքում, քննչական և դատավարական այլ գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, լրացուցիչ դատահետքաբանական և դատաքիմիական փորձաքննություն չնշանակելու դրվագով ՀԿԳ քննիչ Դ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Թիվ 60176918 քրեական գործի նախաքննության ընթացքում՝ 20.11.2018թ. դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին որոշման նկարագրական մասում մեղադրյալի ցուցմունքը շարադրելիս ուղղակի տվյալներ չհայտնելու և փորձագետին քրեական գործի նյութերից չբխող ելակետային տվյալ տրամադրելու դրվագով ՀԿԳ քննիչ Դ.Մ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Թիվ 60176918 քրեական գործի նախաքննության ընթացքում քննիչի կողմից հիշյալ որոշումը կայացնելուն և դրանով պայմանավորված նախաքննության ժամկետների պահպանմանը չհետևելու դրվագով անմիջական վերադաս Ա.Վ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության նախկին ավագ քննիչ, ներկայումս Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի պետի տեղակալ Ն.Մ-ի և նույն վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի նախկին պետ, ներկայում Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ԶՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի վերաբերյալ

02 հոկտեմբերի 2019թ. ՀՈ 19

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության նախկին ավագ քննիչ, ներկայում Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի պետի տեղակալ Ն.Մ-ի և նույն վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի նախկին պետ, ներկայում Կոմիտեի ԶՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայաստանի Հանրապետության դատախազության Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Գ.Գրիգորյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ավագ քննիչ Ն.Մ-ի վարույթում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի

և 34-268-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով քննված 86155418 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ն.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Նախաքննության ընթացքում քննիչը ստանալով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի գրավոր, չբողոքարկված 26.09.2018 և 18.12.2018թթ. ցուցումները, ոչ ամբողջական է կատարել դրա պահանջները, մասնավորապես՝ շուրջ 10 ամսվա ընթացքում Երևան-Արթիկ երթուղու միկրոավտոբուսի վարորդ Կ.Մարգարյանի մասնակցությամբ տեսախցիկներ հայտնաբերելու նպատակով չի կատարել փաթեթը փոխանցելու տեղանքի զննում և լրացուցիչ չի հարցաքննել տաքսու վարորդ Ա.Շահինյանին, ով հետագայում՝ 14.11.2018թ. ավտովթարի հետևանքով մահացել է:

Բացի այդ, ծանուցագրեր է ուղարկել մեղադրյալի ազգական Մարտին Կիլինկարովին և մորը՝ Արմինե Կիլինկարովային: Ծանուցագրերը վերադարձվել են Մ.Կիլինկարովի դեպքում՝ «չպահանջված», իսկ Ա.Կիլինկարովայի դեպքում՝ «տեղափոխված» նշումներով: Դրանից հետո քննիչը՝ մինչև քրեական գործով քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացվելը՝ 16.07.2019թ. որևէ միջոց չի ձեռնարկել Մ.Կիլինկարովին հարցաքննելու նպատակով դարձյալ ծանուցելու կամ նրան բերման ենթարկելու ուղղությամբ, իսկ Ա.Կիլինկարովայի հասցեն պարզելուց, նրան ծանուցագիր ուղարկելուց և նրա կողմից վարույթն իրականացնող մարմին չներկայանալուց հետո դարձյալ որևէ միջոց չի ձեռնարկել վերջինիս հարցաքննելու ուղղությամբ, որպիսի պայմաններում քննիչի կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Իր հերթին, Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի նախկին պետ, ներկայում Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ԶՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժնի Դ.Ֆ-ն պատշաճ չի կատարել քրեադատավարական օրենքով իրեն վերապահված լիազորությունները՝ չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով դատախազի ցուցումները կատարելուն, ինչով իսկ խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ Ն.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ Երևան-Արթիկ միկրոավտոբուսի վարորդ Կ.Մարգարյանի մասնակցությամբ Երևան քաղաքի կենտրոնական ավտոկայանում տեսախցիկներ հայտնաբերելու նպատակով չի կատարել փաթեթը փոխանցելու տեղանքի զննում, քանի որ Կ.Մարգարյանն իր ցուցմունքով չի կարողացել հստակ մատնանշել այն վայրը, որտեղ իրեն փոխանցվել է փաթեթը, ավելին չի կարողացել նկարագրել փաթեթը փոխանցող անձին և նման պայմաններում նպատակահարմար չի համարել կատարել ցուցումի այդ կետի պահանջները: Իսկ ցուցումի դեմ առարկություններ չի ներկայացրել ծանրաբեռնվածության պատճառով: Հսկող դատախազը ցուցումը քրեական գործի համար կարևոր նշանակություն չի ունեցել: Ինչ վերաբերում է տաքսու վարորդ Ա.Շահինյանին, լրացուցիչ չհարցաքննելուն, ապա Ն.Մ-ն հայտնեց, որ նախաքննության ընթացքում դեպքի հանգամանքների վերաբերյալ հարցաքննել է Ա.Շահինյանին, իսկ լրացուցիչ չի կարողացել հարցաքննել նրան, քանի որ վերջինս այդ ընթացքում գտնվել է Արցախի հանրապետությունում, իսկ հետագայում՝ 14.11.2018թ. ավտովթարի հետևանքով մահացել է:

Մեղադրյալ Ս.Գևորգյանի ազգական Մ.Կիլինկարովին և մորը՝ Ա. Կիլինկարովային ծանուցագրեր ուղարկելու, մի դեպքում «չպահանջված» և մյուս դեպքում «տեղափոխված» նշումով դրանք հետ վե-

ռադարձվելու դրվագով Ն.Մ-ն հայտնեց, որ իր համար հասկանալի չի եղել, թե արդյոք վերը նշված անձինք պատշաճ ծանուցվել են, թե՝ ոչ, ուստի բերման ենթարկելու որոշում չի կայացրել, տևական ժամանակ այլ միջոցներ չի ձեռնարկել վերջիններիս հարցաքննության ուղղությամբ:

ՈՒսումնասիրելով նյութերը, լսելով Ն.Մ-ին Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը տևական ժամանակ չի կատարել նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի օրինական, առարկայական՝ 26.09.2018թ. և 18.12.2018թ. ցուցումների պահանջների որոշ կետեր և դրանց վերաբերյալ չի ներկայացրել առարկություններ, որպիսի պայմաններում քննիչի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը: Արդյունքում խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Իր հերթին, Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի նախկին պետ, ներկայում Կոմիտեի ԶՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժնի Դ.Ֆլջյանը պատշաճ չի կատարել քրեադատավարական օրենքով իրեն վերապահված լիազորությունները՝ չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով դատախազի ցուցումները կատարելուն, ինչով իսկ խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Դ.Ֆ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ Արթիկի և Անիի քննչական բաժնի պետի պաշտոնում նշանակվել է 2018թ. հոկտեմբերի կեսերի և պաշտոնավարել է մինչև 2019թ. մարտ ամիս՝ այսինքն շուրջ 5 ամիս, որի ընթացքում ծանոթացել է քննչական բաժնի վարույթում քննվող քրեական գործերին՝ շեշտը դնելով առավել բարդ, մեծածավալ, բազմադրվագ, մեկ տարուց ավելի քննվող քրեական գործերին: Ինչ վերաբերում է քննարկ-

վող քրեական գործին, Դ.Ֆլջյանը հայտնեց, որ դատախազի ցուցումի դեմ առարկություններ չեն ներկայացրել ծանրաբեռնվածության պատճառով, բացի այդ, տվյալ ժամանակահատվածում բոլոր ներկայացված առարկությունները մերժվել են Շիրակի մարզի դատախազության կողմից: Հիմնականում առարկություններ են ներկայացրել՝ քննիչին քրեական գործով քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու դեմ:

ՈՒսումնասիրելով նյութերը, լսելով Դ.Ֆ-ին Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ վերջինս Արթիկի և Անիի քննչական բաժնի պետի պաշտոնում նշանակվել է 2019թ. հոկտեմբերի 15-ին, իսկ ցուցումը տրվել է 2019թ. սեպտեմբերի 26-ին, այսինքն՝ մինչ նրա պաշտոնի նշանակվելը և ողջամտորեն առկա է եղել ժամանակի խնդիր քննչական բաժնի վարույթում քննվող քրեական գործերին ծանոթանալու համար, որպիսի պայմաններում Դ.Ֆ-ի արարքում թեև ձևականորեն առկա է կարգապահական խախտման փաստը, սակայն բացակայում է մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի 29.09.2018 և 18.12.2018թթ. օրինական ցուցումների պահանջների որոշ կետեր չկատարելու դրվագով Ն.Մ-ի արարքներում առկա են կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

2. Ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունների և դատախազի տված օրինական ցուցումների պահանջների կատարմանը չհետևելու դրվագով Դ.Ֆ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը սակայն բացակայում է մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Է.Հ-ի (գործուղված նույն վարչության Թալինի քննչական բաժին) վերաբերյալ

21 նոյեմբերի 2019թ. ԿՀՈ 20

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Է.Հ-ի (գործուղված նույն վարչության Թալինի քննչական բաժին) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետ Ս.Սիմոնյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Է.Հ-ի (գործուղված նույն վարչության Թալինի քննչական բաժին) վարույթում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քննված թիվ 54156819 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Է.Հ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Առերևույթ հանցանք կատարած անձ Ա.Կարապետյանին օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության դեպքում /շուրջ 40 օրվա ընթացքում/ քրեական դատավարության մասնակցի /կասկածյալի, մեղադրյալի/ կարգավիճակ չի տվել, նրան չի հարցաքննել՝ նախաքննության ընթացքում ունենալով նման իրական հնարավորություն: Արդյունքում քննիչի կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Է.Հ-ն իր դիրքորոշումը ներկայացրել է Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի նախագահին ուղղված դիմումով, որով ընդունել է դատավարական խախտում թույլ տալու հանգամանքը և խնդրել նիստն անցկացնել առանց իրեն, նկատի ունենալով, որ աշխատանքային ծանրաբեռնվածությունը և հեռավորությունը:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը առերևույթ հանցանք կատարած անձ Ա.Կարապետյանին օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության դեպքում /շուրջ 40 օրվա ընթացքում/ քրեական դատավարության մասնակցի /կասկածյալի, մեղադրյալի / կարգավիճակ չի տվել, նրան չի հարցաքննել, որպիսի պայմաններում վերջինիս արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը: Արդյունքում քննիչի կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը

սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ա.Կարապետյանին օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերում ակնհայտ առկայության դեպքում քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չտալու դրվագով Է.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Հ-ի վերաբերյալ (գործուղված Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին)

21 նոյեմբերի 2019թ. ԿՀՈ 21

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Հ-ի՝ գործուղված Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին (այսուհետ՝ քննիչ), նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել քաղաքացի Օժեն Բերբերյանի՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին, քննչական կոմիտեի նախագահին, ԱԱԾ տնօրենին և գլխավոր դատախազին հասցեագրված դիմումները՝ քննիչ Գ.Հ-ի կողմից իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի պահանջի խախտում թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է Գ.Հ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Թիվ 17951018 քրեական գործով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված և վարույթում քննված քրեական գործով նախաքննությունը կարճելու միջոցով ավարտելուց հետո՝ 29.03.2019թ.՝ քրեական հետապնդում չիրականացնելու և գործով վարույթը կարճելու մասին որոշման պատճենը չի ուղարկել տուժող կողմին՝ Օ.Բերբերյանին, և վերջինս չի ստացել այն, թեև գործում առկա է որոշումն ուղարկելու վերաբերյալ գրությունը: Արդյունքում՝ քննիչ Գ.Հ-ն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Գ.Հ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին ըստ էության տված բացատրությամբ պնդեց, որ հիշյալ որոշման պատճեն փոստային ծառայության միջոցով ուղարկել է ինչպես տուժողին, այնպես էլ մյուս կողմին՝ Հ.Ադամյանին, հավելելով, որ եթե նույնիսկ տուժողն այն չէր ստացել, ապա՝ հետագայում տուժողին կրկին հանձնել է հիշյալ որոշման պատճենը, ով այն բողոքարկել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազություն, իսկ դատախազը մերժել է բողոքը, սակայն ոչ թե օրենքով սահմանված բողոքարկման ժամկետները բաց թողնելու հիմքով, այլ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Այսինքն՝ ըստ էության տուժողն օգտվել է իր իրավունքներից:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Գ.Հ-ին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչը կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաև այն ֆիզիկական անձին կամ

իրավաբանական անձի ներկայացուցչին, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, պատշաճ ծանուցմամբ անհապաղ ուղարկում է քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը՝ պարզաբանելով գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը և որոշման բողոքարկման կարգը և ժամկետները: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Պաշտոնատար անձանց կողմից սահմանված ժամկետը պահպանելը հաստատվում է դատավարական փաստաթղթերում՝ համապատասխան նշումով: Քրեական դատավարությանը մասնակցող անձանց հանձնման ենթակա փաստաթղթերի ստացման փաստը հաստատվում է գործին կցված նրանց ստորագրությամբ:»: 16.09.2019թ. «Հայփոստ» ՓԲԸ-ից ստացված գրության համաձայն՝ հասարակ փոստային առաքանիների ուղարկման և ստացման վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվում, հասարակ փոստային առաքանիներն ընդունվում են ուղարկողից՝ առանց անդորրագիր տրամադրելու և հասցեատիրոջը (ներկայացուցչին) հանձնվում է առանց ստորագրության: Այսինքն՝ եթե նույնիսկ քննիչի պնդմամբ հիշյալ որոշումն ուղարկել է տուժող Օ.Բերբերյանին՝ հասարակ փոստային առաքանու միջոցով, ակնհայտ է, որ նկարագրվածի պայմաններում քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասի և 262-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, քանի որ հանձնման ենթակա փաստաթղթերի ստացման փաստը գործին կցված կողմի, տվյալ պարագայում՝ Օ.Բերբերյանի ստորագրությամբ հաստատող տվյալ առկա չէ, կամ քննիչի կողմից հիշյալ որոշումը չի ուղարկվել կողմին, իսկ հասարակ փոստային առաքանին, տվյալ պարագայում՝ ոչ պատշաճ ծանուցում է: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Գ.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապե-

տության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 17951018 քրեական գործով 29.03.2019թ.՝ քրեական հետապնդում չիրականացնելու և գործով վարույթը կարճելու մասին որոշման պատճեն տուժողին պատշաճ ծանուցմամբ չուղարկելու համար Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Հ-ի՝ (գործուղված Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին), արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» տույժի կիրառման նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

04 ապրիլի 2019թ.
ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, քննարկելով Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնի պետի տեղակալ, առաջին դասի խորհրդական Գ.Մ-ի նկատմամբ «դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ Կոմիտեի նախագահի միջնորդությունը, նկատի ունենալով, որ Գ.Մ-ի արարքում հիմնավորվել է կարգապահական խախտման փաստի առկայությունն ու կատարված խախտման մեջ վերջինիս մեղավորությունը: Մասնավորապես՝ քրեական գործով Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանի Ձև 8 տեղեկանքում մեղադրյալ Վ.Ուռուսյանի կենսաչափական տվյալները ոչ ճիշտ նշելու արդյունքում 21.01.2019 թվականին որոշում է կայացրել թիվ 52101718 քրեական գործով վարույթը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիմքով կարճելու և Վ.Ուռուսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ համաներման մասին օրենքի ընդունման հիմքով՝ կիրառելով 01.11.2018թ. ընդունված և 06.11.2018թ. ուժի մեջ մտած «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի

5-րդ մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 5-րդ կետի պահանջները: Մինչդեռ, մեղադրյալ Վ.Ուռուսյանի նկատմամբ վերջին տասը տարվա ընթացքում կիրառված է եղել համաներման ակտ և նա ազատվել է պատժի կրումից, ինչի պայմաններում՝ հիշյալ օրենքի դրույթները նույն օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետի (բ) ենթակետի համաձայն՝ մեղադրյալ Վ.Ուռուսյանի նկատմամբ չէին կարող տարածվել: Արդյունքում՝ քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և հիշյալ օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետի (բ) ենթակետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Գ.Մ-ի կողմից կատարված խախտման բնույթն ու դրա հետևանքները, այն, որ վերջինս կոպտորեն խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված խնդիրների իրականացումը, որի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի, Գ.Մ-ն անփույթ և անպատասխանատու վերաբերմունք է դրսևորել իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ՝ քրեական գործով վարույթում ոչ պատշաճ է հետազոտել գործի նյութերը մեղադրյալի նախկին դատվածության առկայության վերաբերյալ, հիմք ընդունելով, որ Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 20.03.2019թ. որոշմամբ հիմնավորվել է խախտման փաստի առկայությունն ու Գ.Մ-ի մեղավորությունը, ուստի, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրա-

պետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին 54-55-րդ և 58-րդ մասերով՝

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ր Ե Ց

1. Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնի պետի տեղակալ, առաջին դասի խորհրդական Գ.Մ-ի նկատմամբ տվյալ իրավիճակում նպատակահարմար համարել «դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժի կիրառումը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

04 ապրիլի 2019թ.
ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, քննարկելով Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ե.Հ-ի նկատմամբ «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ Կոմիտեի նախագահի միջնորդությունը, նկատի ունենալով, որ Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 20.03.2019թ. որոշմամբ հիմնավորվել է Ե.Հ-ի արարքում կարգապահական խախտման փաստի առկայությունն ու կատարված խախտման մեջ վերջինիս մեղավորությունը: Մասնավորապես՝ Ե.Հ-ն հանդիսանալով Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Թորոյանի անմիջական ղեկավարը՝ չի հետևել վերջինիս վարույթում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով քննվող թիվ 68158118 քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, ինչով իսկ խախտվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները: Բացի այդ, վերջինիս նկատմամբ Կոմիտեի նախագահի 29.01.2019թ. թիվ 53-Ա հրամանով կիրառվել է «զգուշացում» կարգապահական տույժը՝ դարձյալ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները խախտելու համար:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Ե.Հ-ի կողմից կատարված խախտման բնույթն ու դրա հետևանքները, և հիմք ընդունելով, որ Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 20.03.2019թ. որոշմամբ հիմնավորվել է խախտման փաստի առկայությունն ու Ե.Հ-ի մեղավորությունը, ուստի՝ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին 54-55-րդ և 57-րդ մասերով,

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ր Ե Ց

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ե.Հ-ի նկատմամբ տվյալ իրավիճակում՝ «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժի կիրառումը համարել նպատակահարմար:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

միջնորդությունը ներկայացնելու մասին

15 մայիսի 2019թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, ուսումնասիրելով Արդարադատության ակադեմիայի ռեկտորի՝ Մ.Գ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու վերաբերյալ, Կոմիտեի նախագահին միջնորդություն ներկայացնելու գրությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Մ.Գ-ն 2019 թվականի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրով նախատեսված ուսումնական դասընթացներից անհարգելի բացակայել է 114 (դասընթացի 76 տոկոսը) ակադեմիական ժամ (դասընթացների ընդհանուր ժամաքանակը՝ 150 ակադեմիական ժամ): Մինչդեռ «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1.2 մասի 1-ին կետի համաձայն՝ ունկնդիրը քննիչների թեկնածությունների ցուցակից հանվում է, եթե անհարգելի պատճառով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 5 տոկոսից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1.2 մասի 1-ին կետով, 2.1 մասով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմել Կոմիտեի նախագահին Մ.Գ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

տարկետում տրամադրելու մասին

03 հուլիսի 2019թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը, ուսումնասիրելով Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված Գ.Ա-ի՝ Արդարադատության ակադեմիայի կողմից կազմակերպված ուսումնական դասընթացների տարեկետում տրամադրելու վերաբերյալ դիմումը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Ունկնդիր Գ.Ա-ն 03.05.2019թ. ««Քրեական դատավարության արդի հարցեր» և «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունքի արդի հարցեր» դասընթացների միասնական քննության արդյունքում ստացել է 6 (վեց) միավոր, որը վերջինիս կողմից բողոքարկվել է և բողոքարկման հանձնաժողովի 10.05.2019թ. թիվ 1 որոշմամբ մնացել է անփոփոխ:

Գ.Ա-ն ունեցած առողջական խնդիրների պատճառով չի ներկայացել «Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները» և «Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա» դասընթացների միասնական քննությանը:

Ունկնդիր Գ.Ա-ի 06.05.2019թ. դիմումի հիման վրա Արդարադատության ակադեմիայի ռեկտորը կայացրել է 16.05.2019թ. թիվ 001/019-Ա որոշումը, որով նրա բացակայությունը համարվել է հարգելի: 10.06.2019թ. նշանակվել է լրացուցիչ քննություն, սակայն Գ.Ա-ն առողջական խնդիրների պատճառով լրացուցիչ քննությանը նույնպես չի ներկայացել:

Նման փաստական հանգամանքների պայմաններում առկա է «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառման հիմքեր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գ.Ա-ին տրամադրել տարեկետում մինչև քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց հաջորդ մասնագիտական պատրաստումը:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Արսեն Այվազյան - Կոմիտեի նախագահի տեղակալ (Հանձնաժողովի նախագահ)

Պերճ Այվազյան – Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վերահսկողության վարչության պետ (Հանձնաժողովի անդամ)

Ամբակում Գրիգորյան – Կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության պետ (Հանձնաժողովի անդամ)

Կարեն Թորոսյան - Կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության պետ (Հանձնաժողովի անդամ)

Սրբուհի Գալյան - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ (Հանձնաժողովի անդամ)

Արթուր Վրդանյան – Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի խորհրդական (Հանձնաժողովի անդամ)

Համազասպ Թորոսյան – Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պետաիրավական վարչության պետ (Հանձնաժողովի անդամ)

Նաիրա Ճնգրյան – Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ (Հանձնաժողովի անդամ)

Ժողովածուի խմբագիր՝
Հանձնաժողովի քարտուղար ***Ջուլիետտա Գևորգյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2 0 2 0

Հատոր 5

Տպագրությունը՝ օֆսեթ

Թուղթ օֆսեթ 80 գր., չափսը՝ 60x80, 1/16
Ծավալը՝ 7 հատ. մամուլ
Տպաքանակը՝ 500 օրինակ:
Տպագրվել է ԱՁ «Արա Մնացականյան» տպագրատանը: